

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ



ԲԵՐԺԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ՀԱՄԱՐ



338.98

U-93

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԵՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

07 FEB 2015

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԼ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

38.98


Ս-93

# ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



16136-58

## ԲԵՐԲԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1.

Համամիութենական կենտրոնական Գործադիր կոմիտեն 1928 թ. դեկտ. 15-ին ընդունել է բերքատվության բարձրացման մասին մի վորոշում\*), ըստ վորի առաջիկա հինգ տարում գյուղատնտեսության բերքատվությունը պիտի բարձրացնենք առնվազն 30—35 տոկոսով: Վորոշումն ընդունված է Բանվորա-Գյուղացիական տեսչության կողմից արված զեկուցման հիման վրա: Իսկ այդ զեկուցումն արդյունք է այն ուսումնասիրության, վոր կատարել է Բան.-Գյուղ. Տեսչությունը խորհրդային և կոլլեկտիվ տնտեսություններում, ինչպես և առաջավոր անհատական տնտեսություններում:

Ի՞նչ կարևոր նշանակություն ունի այդ վորոշումը մեր գյուղատնտեսության համար:

Վորպեսզի այս հարցին պատասխանենք, պետք է համառոտակի ծանոթանանք մեր գյու-

\*) Այդ վորոշումը բերվում է գրքուկի վերջում:

դատնտեսութեան ներկա վիճակի հետ: Սակայն հիմնականում բերքատուութեան բարձրացման վորոշումը մեր արդյունաբերութեան անխափան զարգացումն է ապահովում:

Հացը և մնացած գյուղատնտեսական մթերքների կեսը հեղափոխութունից առաջ շուկա ելին հանում կուլակն ու կալվածատերը: Իսկ այժմ չքավոր ու միջակ տնտեսություններն են հանդիսանում գյուղատնտեսական մթերքի հիմնական արտադրողները:

«Բերքատուութեան բարձրացման ղեկը ետի գլխավոր մասը չքավոր և միջակ տնտեսութունների բարձրացման միջոցներին և վերաբերում», ասում է ընկ. Յակովլեն իր ղեկուցման մեջ: Դեկրետի մեջ հիշատակված բոլոր միջոցներն էլ նպաստում են չքավորի և միջակի գյուղատնտեսութեան զարգացմանը: Իսկ այդ զարգացումը բանվոր դասակարգի և արդյունաբերութեան շահերին չի հակասում:

Մեր զարգացող արդյունաբերությունն ու մեծացող քաղաքները տարեցուտարի ավելի շատ են գյուղատնտեսական մթերքներ սպառում: Այդ պահանջի բավարարելը վոչ միայն անհրաժեշտ է արդյունաբերութեան համար, այլ և չքավորի ու միջակի համար, քանի վոր այդպիսով բարձրանում է և նրա տնտեսութունը:

Աճող արդյունաբերութունը նպաստում է գյուղատնտեսութեան վերակառուցմանը, տալով տասնյակ հազարավոր տրակտորներ, տրիեքտեր և այլ գյուղատնտեսական մեքենաներ: Այսպիսով բերքատուութեան բարձրացումը դառնում է այն միջոցներից մեկը, վորով բանվորի և գյուղացու դաշինքն ավելի յե ամրապնդվում:

## 2.

Նախքան բերքատուութեան բարձրացման ղեկը ետի մեջ հիշած միջոցներին անցնելը մենք պատասխանենք այն հարցին, թե կարո՞ղ ենք մենք բերքատուությունը բարձրացնել ավելի առաջ թափով, քան արվում էր պատերազմից առաջ: Յարական կառավարութեան որոք բերքատուությունն ավելանում էր տարեկան մի տոկոսով:

Յեթե համեմատելու լինենք Խորհրդային Միութեան բերքատուությունը մյուս յերկրներին հետ, ապա կտեսնենք, վոր մենք շատերից ենք յետ: Մի հեկտարից Հոլլանդիան ստանում է 28 ցենտներ\*) ցորեն Անգլիան—21, Գերմանիան—17, իսկ մենք—մոտ 8 ցենտներ: Բերքատուութեան տեսակետից մենք յետ ենք մնում նույնիսկ Բուլգարիայից և Ռումինիայից:

\*) Հեկտարը 50 սաժենով պակաս է մի դեսիատինից, իսկ ցենտները հավասար է 100 կիլոգրամի:

Ահա թե ինչքան հետամնաց գյուղատնտեսու-սություն ենք ժառանգել ցարական կառավարու-թյունից, վորը գյուղացու տնտեսության բարձրացման համար մի կոպեկ ել չեր ծախսու-ում: Ընդհակառակը, հողային պայմաններն այն ժամանակ այնպես եյին, վոր գյուղացու տնտես-սության բերքատուությունն արագ թափով բարձ-րանալ չեր կարող: Յեվ ճիշտ եր նկատել ընկ-լենինը, վորը դեռ պատերազմից առաջ գրու-մ եր, թե հողի ազգայնացումից բացի ուրիշ վոչ մի միջոց չկա սրբելու միջնադարի մնացորդնե-րը Ռուսաստանում և դարկ տալու ազրոնոմիա-կան միջոցներին:

Նրանք, վորոնք թերահավատ են մեր բեր-քատուության բարձրացման գործին, այսպիսի որինակ են բերում: 200 տարի առաջ Գերմա-նիայում մի դեսիատինից ստանում եյին 45 փուլթ, իսկ մենք այժմ ենք ստանում այդքան: Մոտ 100 տարի անցավ, ասում են նրանք, մին-չև Գերմանիան կարողացավ բերքատուությունը հասցնել 60 փթի: Այնինչ մենք հինգ տարում ենք ուզում հասնել այդ չափին: Գերմանիայի արդյունաբերության զուգընթաց ել ծաղկում եր գյուղատնտեսությունը և պատերազմից առաջ նրանք մի դեսիատինից միջին հաշվով ստանում եյին 150 փուլթ:

Այդպես ասողները կարծում են, թե Գեր-մանիային հասնելու համար հարկավոր ե նույն-պես 200 տարի, իսկ վորովհետե այդ ժամանա-կում Գերմանիան դարձյալ պիտի առաջ գնա, ուրեմն մենք նրան յերբեք չենք հասնի:

Ի հարկե, բոլորովին սխալ են նրանք, վո-րոնք Գերմանիայի որինակով ուզում են մեր գյուղատնտեսության զարգացման ճանապարհը վորոշեն: Նրանք մոռանում են, վոր Հոկտեմբե-րյան հեղափոխությունն այնպիսի մի հեղաշըր-ջում մտցրեց մեր գյուղատնտեսության մեջ, վորպիսին շատ մեծ ազգակ ե արագ թափով վոչ միայն կապիտալիստական լերկրների գյու-ղատնտեսության չափին հասնելու, այլև անց-նելու նրանից:

Այն բոլոր նոր ձևերը, գործիքներն ու քի-միական պարարտացման միջոցները, վորոնք հարյուր տարվա ընթացքում Գերմանիայում գտել են ու գործադրելով իրենց դաշտերի բեր-քատու-թյունը բարձրացրել,—մենք հնարավո-րություն ունենք վերցնելու նրանցից և կարճ ժամանակամիջոցում նրանց հասնելու:

Նույն բանն ե և մեր արդյունաբերության մեջ: Մենք տեխնիկայով ել ենք յետ: Բայց այդպես մտածելով, մենք պիտի հայտարարենք, վոր յերբեք չենք հասնի կապիտալիստական յեր-

կըրնեքի տեխնիկային ու արդյունաբերութեանը: Այնինչ իրականում մենք հակառակն ենք տեսնում: Մեր արդյունաբերութեան աճման տոկոսը չորս անգամ ավելի բարձր է կապիտալիստական յերկրներէ արդյունաբերութեան աճման տոկոսից:

Բացատրենք որինակով: Մեկը գնում է վոտով, նա 200 կիլոմետր արդեն առաջ է անցել, իսկ մյուսը ձիավոր է և ձին բշտում է վոտավորի յետևից: Պարզ է, վոր ինչքան ել առաջ է վոտով գնացողը, ձիավորը վոչ միայն կհասնի նրան, այլև առաջն ել կտա: Մեր արդյունաբերութեան ընթացքը չորս անգամ արագ է կապիտալիստական յերկրներից. իհարկէ, մենք պիտի հասնենք նրանց և առաջ անցնենք:

Բերքատվութեան բարձրացման տոկոսն ել պիտի նույն թափով առաջ գնա: Յեթե մեր արդյունաբերութեանն այդպիսի մեծ բայլերով է առաջ գնում, ապա նույնը չենք կարող ասել գյուղատնտեսութեան մասին: Դրա համար ել բերքատվութեան բարձրացման դեկրետը հիշատակում է այնպիսի միջոցներ, վորոնց գործադրմամբ մենք գյուղատնտեսութեան ասպարիզում ել կունենանք նույնքան հաջողութուններ:

Այդ միջոցներէ գործադրմամբ մեր բերքա-

տվութիւնը վեց անգամ բարձր կլինի նախապատերազմյան բերքատվութիւնից և յերեք անգամ ել գերմանականից: Դեկրետի համաձայն 5 տարվա ընթացքում մեր բերքատվութեան բարձրացումը պիտի կատարվի 30—35 տոկոսով, այսինքն տարին 6—7<sup>0</sup>/<sub>10</sub>, այնինչ գերմանական գյուղատնտեսութեան բերքն այժմ բարձրանում է տարին 2<sup>0</sup>/<sub>10</sub>-ով:

30—35 տոկոսով բերքատվութիւնը բարձրացնելը, —այդ նշանակում է ցանքի նույն տարածութիւնից ստանալ մեկ և կես միլիարդ փութ ցորեն: Իսկ դեկրետը, և մանավանդ նրանից հետո լույս տեսած գյուղատնտեսական հարկի նոր որենքը, հնարավորութիւն են տալիս ավելացնելու նաև ցանքերի տարածութիւնը:

Իսկ ի՞նչ պատկեր է ներկայացնում մեր, Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսութիւնը:

Գյուղական մի ծուխը արտային շրջանում ունի 4<sup>1</sup>/<sub>2</sub> հեկտար շնչաբաժին հող, գարնացանի շրջանում — 3<sup>1</sup>/<sub>2</sub>-ից միքիչ ավելի, աշնացան ցորենի շրջաններում — 3<sup>1</sup>/<sub>2</sub> հեկտար և բամբակացան շրջանում — 1<sup>1</sup>/<sub>2</sub> հեկտար: Մեզանում 109 տնտեսութիւնից միայն իննը ունեն յերկաթե գութան. լծկանից գութիկ է բոլոր տնտեսութիւններէ համարչա կեսը:

Հարուստ չենք և մեռյալ ինվենտարով: Ըստ վերը բերած շրջանների մի տնտեսությունը առանապահական գոտում ունի 56 ու մեռյալ ինվենտար, գարնացանի գոտում—29 ու, աշնացանի 25 և բամբակացանության շրջանում—57 ու: Յեթե սրա վրա ավելացնենք այն, վոր մեր յերկիրը պատերազմների ընթացքում ավերվել է, վոր մեզ համար սակավահողությունը բնորոշ է,—ապա պարզ կլինի մեր գյուղատնտեսության հետամնացության աստիճանը:

Վճրքան է մեր գլխավոր մշակույթների միջին բերքը. աշնացան ցորենը 9,2 ցենտներ, գարնացանը—6,5 ցենտներ (իսկ Հայաստանում գարնացան ցորենի տարածությունն անհամեմատ ավել է աշնացանից), աշնան գարի—6,8 ցենտներ, բամբակ—8 ցենտներ, ցանովի խոտ—41 ցենտներ և այլն:

Վորպեսզի պատկերն ավելի պարզ լինի, բերենք միայն մի որինակ դաշտային շրջանի գյուղատնտեսությունից, վորպիսին ավելի ապրանքային է: Դաշտային շրջանում մի հեկտար աշնան ցորենի միջին բերքը հավասար է 980 կիլո ցորենի, այնինչ շատ յերկրներ կան, վորտեղ վաղուց է անցել 2000 կիլոյից:

Ահա թե ինչու կարևոր նշանակություն է ստանում բերքատվության բարձրացման դեկ-

րետը: Յեթե մեզանում մի տնտեսությունն միջին հաշվով մի հեկտարից ստանում է 50 փութ հացահատիկ, ապա բոլոր միջոցները գործադրելով 5 տարվա ընթացքում մենք պիտի ստանանք 68 փութ հացահատիկ:

## 3.

Ընթերցողը կարող է հարցնել՝ արդյոք հրնարավոր է 5 տարվա ընթացքում բերքատվության չափը 18 փութով ավելացնել: Մեծ տուկոս չենք վերցնում, մեր ուժերն ու նյութական միջոցները կներեն:

Այդ հարցին պատասխանելու համար մենք կբերենք Բանվորա-Գյուղացիական Տեսչության կատարած ուսումնասիրության արդյունքները Ռուսաստանում: Այնտեղ զանազան գավառներում մոտ հազար որինակելի տնտեսությունն են ուսումնասիրել՝ պարզելու համար, թե ինչքան են նրանք իրենց բերքատվությունը բարձրացրել: Այդ ուսումնասիրության արդյունքը յեղել է այն, վոր այդ որինակելի տնտեսություններում բերքի չափը  $63\frac{0}{10}$ -ով ավելի է յեղել հարևան տնտեսություններից:

Վորպեսզի տարակուսանք չլինի և չասվի, թե միայն կուլակը միջոցներ ունի իր տնտեսությունը բարձրացնելու և այդքան բարձր բերք

ստանալու, պիտի ասենք, վոր այդ ուսումնասիրված տնտեսությունների 66% -ը միջակ են, 12 ը՝ չքավոր և 22-ը՝ կուլակ:

Ուսումնասիրության ընթացքում պարզել են և այն, թե ինչ միջոցներ ե գործադրել այդ որինակելի տնտեսությունն այդքան բարձր բերքատվություն ստանալու համար: Յեվ ինչ ե պարզվել:

Զտած սերմ ցանելով, բերքատվությունը բարձրացել ե. տնտեսությունների մի մասը վոչ միայն գտած սերմացու չե ցանել, այլ ձեռք ե բերել և լավ տեսակի սերմացու: Հողի մշակության ձևի փոփոխումն ազդել ե բերքի բարձրացման վրա: Շարքացանի գործադրությունը 8% -ով ավելացրել ե բերքատվությունը:

Իսկ բերքի բարձրացման դեկրետը հենց ուշագործյուն ե դարձնում այն պարզ միջոցների վրա, ազդողների անհարկումների այն հասարակ միջամտմի վրա, վոր մատչելի չե այսորվա մեր գյուղին:

Խնդիրը վերաբերում ե գտած սերմացու ցանելուն, վորովհետև մաքուր և առողջ սերմացուն ամենահամեստ հաշվով բերքատվությունը բարձրացնում ե 10% -ով: Դեկրետը հրահանգում ե առաջին հերթին չեղած մեքենաները լրիվ ոգտագործելու մասին: Մենք այդ պարզ

միջոցների մասին կխոսենք, բայց վորպեսզի ընթերցողը միանգամայն համոզվի և ել չկասկածի, վոր հնարավոր ե այս միջոցների գործադրմամբ բերքը բարձրացնել, բերենք մի պարզ որինակ:

28 թվին Հայաստանում կար 150-ից ավելի սարքին և լավ տեսակի սերմատիչ: Ամեն մի սերմատիչից պիտի աշխատի ամենաքիչը 60 որ և որական մաքրի 2 տոնն \*) հացահատիկ: Յեթե բոլորն աշխատեցնենք և կանոնավոր, ապա ըստ նորմայի մենք տարին պիտի գտեյինք 18,000 տոնն (1.080.000 փութ) հացահատիկ: Այնինչ գտել ենք միայն 20 տոկոսը, այսինքն 5 սերմատիչից միայն մեկն ե՝ լրիվ աշխատել, մնացածները պարապ ժանգոտել են ձյունի և անձրևի տակ, և կամ գյուղխորհրդի շենքի մոտ ընկած, հավերի համար թառ են լեղել:

Թող ամեն վոք ստուգի վերև բերած հաշիվը, իր տեսած սերմատիչի աշխատանքն ուսումնասիրի: Յեվ նա կհամոզվի, վոր մեր սերմացուն գտելու համար մենք բավականաչափ սերմատիչ ունենք, այնինչ չենք ոգտագործում:

Ինչիցն ե:

Պատճառները շատ են: Վարկ. ընկերություն

\*) Տոննը հավասար ե 61 փթի:



նը սերմզտիչ ե ստանում, բայց մի մաղը պակաս ե, կամ փոկը չեն ուղարկել, կամ թե գյուղխորհուրդը պատճառ ե բռնում, վոր գյուղացիք ծանոթ չեն, կամ իբր թե ցորենները հորում են և չեն կարողանում գտել: Կարծես չի կարելի գտել և ապա հորել: Իսկ կատարած փորձերը, հենց մեր գյուղերում ու կոլլեկտիվներում, ապացուցել են, վոր մեզանում ևս գյուղատնտեսական գործիքներն ու մեքենաները մեր բերքատվությունը շատ են բարձրացնում:

Ընթերցողին համոզելու համար բերենք մի քանի որինակներ՝ ցույց տալու, թե ինչ միջոցներով անհատական կամ կոլլեկտիվ տնտեսությունը մինչև դեկրետ հրատարակելն ստանում եր մեջինից շատ բարձր բերք:

Ղամարլուեի Յուվա գյուղի բնակիչ Յենոբ Սաֆարյանը բամբակ ցանելուց առաջ դաշտ ե կրում մոխիրը, դռան ու բակի աղբը, շող տալիս ու տրակտորով վարում (26 թվից): Վարելուց հետո փոցխում ե զիգ-զագ փոցխով ու ցանում շարքացան մեքենայով, ամառվա ընթացքում քաղհանն ել մեքենայով ե կատարում: Յեվ այդպիսով տարեցտարի նա ավելացնում ե բամբակի բերքը: 1924 թ. նա մի հեկտարից ստացել ե 132 փութ բամբակ, 25 թ.՝ 144 փութ: 26 թվին—156 փութ, իսկ 27 թվին՝ 162 փութ.

Իսկ հայտնի չե, վոր բամբակագործական շրջաններում բամբակի միջին բերքը հասնում ե 65 փթի: Այսպիսով դեռ 25 թ. մի գյուղացու հաշովում ե միջին բերքի կրկնակին ստանալ ու տարեցտարի յել բերքն ավելացնել: Հինգ տարվա ընթացքում բամբակի միջին բերքը չեթե հասցնենք 85 փթի, մենք վոչ միայն կարող ենք հասնել կապիտալիստական յերկրների բամբակի միջին բերքին, այլ և կարճ ժամանակում նրանցից առաջ անցնել:

Բերենք մի որինակ ել կոլլեկտիվից: Լուկաճնի կոլլեկտիվ տնտեսությունը (Եջմիածնի գավառ) 1926 թ. իր սեփական ագրոնոմը չունել: Ցանքը կատարվում եր սովորական ձևով, մեքենաներ քիչ ունեյին, ցորենի միջին բերքը մի հեկտարից հասնում եր 45 փթի: 26 թ. հետո ագրոնոմի ղեկավարությամբ նրանք ցանքը մեքենայով սկսեցին կատարել: Նրանք հողն աշնանը տրակտորով են հերկում, գարնանը կրկնավար անում, սերմը ախտահանում, գտում ու շարքսցանով ցանում: Ի՞նչ բերք են ստացել: Միջին թվով մի հեկտարից ստանում են մոտ 90 փութ ցորեն, այսինքն 2 անգամ ավելի, քան առաջ եյին ստանում: Ահա թե ինչքան ե լինում սարբերությունը, յերբ իրագործում ենք ագրոնոմի տված ցուցմունքը:

1927 թվին Բարանայում Անդրանիկ Ասատրյանն ու Պ. Մկրտչյանը շրջագրոնուսի խորհրդով մի հեկտար հող արորով են վարում, մեկն էլ գութանով: Յերկու դաշտումն էլ սև գարի յեն ցանում: Բերքի հավաքման ժամանակ Ա. Ասատրյանը գութանով վարած հողից ստանում է 78 փ. գարի, իսկ արորով վարած հողից՝ 58 փութ: Պ. Մկրտչյանը գութանով վարած հողից ստանում է 83 փութ, իսկ արորով վարած հողից՝ 54 փութ:

Վերջին որինակն էլ բերենք 27 թվին կազմակերպած ցուցադրական հողամասերի փորձից: Բոլոր գավառներում էլ ագրոնոմները կազմակերպել են ցուցադրական հողամասեր առհաստական տնտեսություններում, կոլլեկտիվներում, գյուղի դպրոցին ու փոկին պատկանող հողերի վրա, ինչպես և ագրոկայանների դաշտերում: Ցուցադրական հողամասերի թիվը հասնում է 600-ի, վորից 152-ը հացաբույսեր են յեղել, 196 հողամաս՝ բամբակ, 175-ը՝ ցանովի խոտեր և այլն:

Ի՞նչ արդյունք է ստացվել այդ հողամասերից:

Ագրոկայանի ցուցադրական հողամասից բերք է ստացվել՝ ցորեն — 135 փութ, բամբակ — 115 փ., գյուղացու հողի վրա կազմակերպած

ցուցադրական հողամասից՝ ցորեն — 120 փութ, բամբակ — 100 փութ: Այսինչ մենք գիտենք, վոր բամբակի միջին բերքը 65 փութ է, իսկ ցորենինը — 50 փութ: Ուրեմն գյուղացու հողի վրա կազմակերպած ցուցադրական հողամասը յերկու անգամ ավելին է տալիս, յերբ վարում է գութանով, մեքենայով ցանում, այն էլ զաած ու ախտահանած սերմացու: Ցուցադրական հողամասերի ճնշող մեծամասնությունը կազմակերպված է չքավորների ու միջակների տնտեսություններում: 600 ցուցադրական հողամասից 497 գյուղացիների հողի վրա յե յեղել, վորից չքավոր — 255, միջակ — 229 և կուլակ — 13 տնտեսության:

Փորձադաշտերը դեռ շատ վաղուց հաստատել են, վոր մեզանում հնարավոր է բերքի չափը կրկնապատկել: Յեվ բնորոշն այն է, վոր անհաստական տնտեսությունների ձեռք բերած հաջողությունների չափը յետ չի մնում փորձադաշտից: Այսինքն գյուղացին իր տնտեսության մեջ կարողանում է նույն չափով ցորեն ստանալ, վորքան ագրոնոմները փորձադաշտում:

Թե այդ գյուղացիների և թե փորձադաշտի ավյալները գալիս են ապացուցելու, վոր մեր հողը կղիմանա բարձր բերքին, վոր հարկավոր չի գերմանացի լինել մի հեկտարից 2500

փութ կարտոֆիլ ստանալու համար: Այն ժամանակ, չերբ միջին բերքի չափը Ռուսաստանում հավասար է 45 փութ հացահատիկի մի հեկտարից, քիչ չեն այնպիսի անտեսություններ, վորոնք ստանում են միջին հաշվով 70-80 փութ դարձյալ մի հեկտարից:

Այսինքն հենց այժմ ել գոյություն ունեն անտեսություններ, վորոնց բերքատվության տոկոսը շատ ավելի բարձր է, քան մենք ծրագրել ենք հասնել հինգ տարուց հետո: Իհարկե, այդ անտեսությունների ընդհանուր տոկոսը, համեմատած գյուղացիական 24-25 միլիոն ծխերի հետ, շատ քիչ է, բայց այդ քիչն ել ապացույց է, վոր մեզանում հնարավոր է բերքատվությունը բարձրացնել, վոր անհատական անտեսության կատարածը «հրաշք» չի, այլ միանգամայն իրագործելի ամբողջի համար:

Ավելին. անհատական անտեսությունների ունեցած հաջողությունները դառնում են որինակ ամբողջ գյուղի համար, և քիչ չեն այն դեպքերը, չերբ ամբողջ գյուղն է ձեռք բերում բերքի բարձրացման մեծ տոկոս: Կարևորն այն է, վոր միջակի կամ չքավորի ձեռք բերած հաջողությունները մատչելի չեն նման անտեսությունների համար:

Յեթե համեմատության ենք դնում անհա-

տական անտեսությունների և կոլեկտիվի ձեռք բերած հաջողությունները բերքի բարձրացման ասպարիդում, ապա տեսնում ենք, վոր կոլեկտիվում ավելի չե: Հյուսիսային Կովկասում կոլեկտիվները միջին հաշվով մի հեկտարից ստանում են 37 փութ ցորեն, իսկ անհատական և որինակելի անտեսությունը—32 փութ, այսինչ սովորական միջինը շատ ցածր է:

Բայց այդ տարբերությունը ցույց է տալիս նաև այն, վոր կոլեկտիվների համար 35% ով բերքատվության բարձրացումը քիչ է. նրանք ունեն խոշոր անտեսության բոլոր առավելությունները, նրանց հողերը կենտրոնացված են, անհատական անտեսությունների հետ համեմատած նրանք ավելի շատ մեքենաներ ու գյուղատնտեսական գործիքներ ունեն: Դրա համար ել դեկրետը կոլեկտիվների բերքատվության չափը սահմանել է կրկնակի:

Կոլեկտիվների փորձը մի ուրիշ բան էլ է ցույց տալիս: Այն, վոր բարձր բերք ստանալով, միայն կոլեկտիվացման ճանապարհով մենք կարող ենք կուլակային անտեսությունների ազդեցությունը թուլացնել և գյուղացիության ճնշող մեծամասնությունը տանել նրանց ճանապարհով:

Բացի կոլեկտիվներից, մենք ունենք և խոր-

հըրդային անտեսություններ, վորոնք հացաբուս-  
սերի մշակությամբ են զբաղվում: Հայաստա-  
նում միայն վերջերս ենք կազմակերպել այդպի-  
սի խոշոր անտեսություն Լենինականում, վորի  
տարածութունը հասնում է մինչև 5000 հեկտա-  
րի: Իսկ Միության մեջ այդպիսի անտեսություն-  
ներ շատ կան և բացի յեղածններից, հատուկ մի-  
ջոցներ են հատկացված՝ կազմակերպելու միջա-  
նի հարյուր հազար հեկտար տարածությամբ  
խորհրդային նոր անտեսություններ, վորոնցից  
ամեն մեկը դառնալու յե «հացի ֆաբրիկա»,  
տալով տասնյակ միլիոն փութ հացահատիկ:

Խորհրդային անտեսությունների աճման հա-  
ջողությունը պակաս չի կոլլեկտիվից: Յեթե  
Ռուսաստանում գյուղական անտեսությունների  
միջին բերքն ընդունենք 8 ցենտներ մի հեկտա-  
րից, ապա ամենից թույլ խորհրդային անտե-  
սությունը տալիս է 10 ցենտներ: Ամենաբարձր  
բերքատվություն տալիս են Ուկրալինայի խորհրդ-  
դային անտեսությունները, վորտեղ միջանիսի  
բերքատվությունն անցնում է 22 ցենտներից,  
այսինքն շատ ավելի բարձր է Գերմանիա-  
յի և նույնիսկ Անգլիայի բերքատվության միջին  
չափից:

Թե անհատական որինակելի անտեսու-  
թյուններ, թե կոլլեկտիվ ու խորհրդային տըն-

տեսությունների փորձը գալիս են հաստատելու,  
վոր մեզանում բերքատվության բարձրացումն  
այն սահմանում, ինչ վոր գեկրետով է վորոշ-  
ված, միանգամայն հնարավոր է: Այդ նույն տը-  
վյալները համոզում են նաև, վոր միայլ են նը-  
րանք, վորոնք կարծում են, թե մեր գյուղա-  
տնտեսությունը գերմանականին հասցնելու հա-  
մար պահանջվում է հարյուր տարի: Յեվ վերջա-  
պես, նրանք հաստատում են և այն, վոր մենք  
լիակատար հնարավորություն ունենք վոչ մի-  
այն կարճ ժամանակամիջոցում մեր արդյունա-  
բերությունն ու գյուղատնտեսությունը հասցնե-  
լու կապիտալիստական չերկրներ չափին, այլև  
անցնելու:

## 4.

Այժմ ծանոթանանք բերքատվության բարձ-  
րացման գեկրետի առանձին գլուխների հետ:  
Գեկրետը հատուկ ուշադրություն է դարձնում  
գյուղատնտեսական գործիքների ու մեքենանե-  
րի լրիվ ոգտագործման վրա:

Ըստ գեկրետի չերեք տարուց հետո ամե-  
նուրեք սերմերի զտումը պիտի պարտադիր դառ-  
նա: Մենք արդեն տեսանք, թե ինչքան ենք ոգ-  
տրվում մեր ունեցած սերմատիչներով: Այդ դը-  
րությունը վերացնելու համար գեկրետը հրա-

հանգում ե չքավոր տնտեսութիւնների սերմացուն անվճար գտել և տեսակավորել, հողալին ամբողջ համայնքների համար արտոնյալ կերպով վաճառել սերմգտիչներ: Բացի այդ, դեկրետը հրահանգում ե.

«Վարձակայաններն ու նորոգող արհեստանոցներն ավելի լրիվ ոգտագործել, ապահովելով, վոր դրանք տարին բոլոր աշխատեն: Առաջիկա յերկու տարում զգալի չափով ավելացնել ինչպես բյուջետային հատկացումները, նույնպես և վարկավորման չափերը՝ վարձակայանների և նորոգող արհեստանոցների ցանցն ընդլայնելու, ինչպես և դրանց անհրաժեշտ մեքենաներ և գործիքներ, պահեստի մասեր, ածուխ և զանազան նյութեր մատակարարելու համար: Նորոգող արհեստանոցների ցանցը պետք ե ընդլայնվի այն չափով, վորպեսզի հնարավոր լինի իր ժամանակին և լավորակ նորոգել գյուղատնտեսական բոլոր գործիքներն ու բարդ մեքենաները, ինչպես և տրակտորները:

«Տրակտորներն ավելի լրիվ ոգտագործելու համար դրանց կիրառել վոչ միայն վարի, այլև ուրիշ աշխատանքների համար: Դաշտալին աշխատանքների յեռուն շրջանում աշխատանքի յերկու և յերեք պահկութիւն կարգել: Վառելիքի և գործիքները յեղելու նյութերի պահեստների ցան-

ցըն ընդլայնել: Տրակտորներին կցելու գործիքներ ու պահեստի մասեր մատակարարելն ապահովել: Տրակտորների պատրաստելն ուժեղացնել: Տրակտորները շրջաններին բաժանելիս հատ ու կենտ ցրելու յերևույթը վերացնել, տրակտորային կայանների ցանց կազմակերպել և ուժեղացնել տրակտորային խմբերի կազմակերպութիւնը»:

Վերևը տեղեկացանք, վոր Հայաստանի գյուղատնտեսութիւնը կարիք ունի մեքենաների և գործիքների: Ամբողջ վարի մոտ 70% -ը դեռ արորով ենք անում: Գութանի պահանջը շատ մեծ ե, 13,000 գութանի դիմաց մենք ունենք 70000 արոր: Աշխատում են և 200-ից ավելի տրակտորներ:

Համարյա բոլոր շրջաններում ել կան գյուղատնտեսական գործիքների և մեքենաների վարձու կայաններ: Սակայն ինչպես են նրանք աշխատել, արդյոք բոլոր գործիքներն են աշխատել, թե նույն պատկերն ե, ինչ վոր սերմգտիչներին ետ:

Կարևորները միայն թվենք՝ գութանը, փոցխը, շարքացանը: Սերմգտիչների աշխատանքի հետ ծանոթացանք: Վարձակետերում ունենք 460 գութան, 180 փոցխ և 50 շարքացան: Բոլորն ել աշխատանքի համար պիտանի յեն: Բայց և այն-

պես նրանք լրիվ չեն աշխատել. յուրաքանչյուր գութանն աշխատել է մոտ 10 որ, այնինչ նրա նորման 40 որ է: Շարքացանը սեղոնում պիտի ցանի ամենաքիչը 40 հեկտար: Այսինքն յեթե վարձու կայանների բոլոր գործիքները բանեցնենք, մենք պիտի յերկու հազար հեկտար ցանք անենք նրանցով: Այնինչ իրականում դրա կեսն էլ չի արված, նույնիսկ քառորդը:

Իսկ թե ինչ տարբերություն կա գութանի և արորի տված ոգուտը մեջ, այդ մենք տեսանք: Մեր գյուղացին էլ է համոզվում գութանի առավելությանը և համոզվում է միայն փորձից հետո: Ահա միջանի որինակներ:

Խարկով գյուղում (Լենինականի գավառ, 4-րդ գավառ) Սեթո Համբարյանն ունի մեկ լուծ լեզ, մի սալ, մի գութան և մի արոր: Ընտանիքի անդամների թիվը 5 է: Գյուղում նա համարվում է միջակ տնտեսություն: Ընկ. Սեթոն 25 թվին ազրոնոմի խորհրդով յերկու դեսիատին ցորեն է ցանում՝ մեկ դեսիատինը սովորական ձևով՝ արորով, իսկ յերկրորդը պարարտացնում է 10 սալ մոխրով և աղբով: Գութանով վարածից ու պարարտացրածից նա ստանում է 85 փութ, իսկ արորով վարած հողից՝ միայն 58 փութ ցորեն: Ուրեմն գութանով վարելն ու 10 սալ աղբ Գցելը նրան 27 փթից ավելի ցորեն է տվել:

Նույն գավառի Բուղղաշեն գյուղում Մկր Մանուկյանը (Նգոյենց) ունի մի լուծ լեզ, մի լուծ արջառ, մի սալ և մի գութան: Ընտանիքի անդամների թիվը 7 է: Նա փորձի համար 25 թվի աշնանը վերցնում է իր յերկու ու կես հեկտարանոց հողամասը մեջտեղից ուղիղ յերկու կես անում և մի մասը գութանով աշնան հերկ անում: 26 թվի գարնանը հերկած հողամասը շարքացան է անում, իսկ մյուսը շաղացան, վարելով արորով: Աշնան հերկ ու շարքացան հողամասը տալիս է 107 փութ ցորեն, իսկ սովորական ձևով ցանածը—73 փութ: Մանուկյանն ամեն տարի լեզ աշնան հերկ է անում: Գյուղի մեծ մասը նրանից է որինակ վերցրել:

Ինարկե, այստեղ բերքատվության բարձրացման վրա մեծ ազդեցություն է ունեցել և այն, վոր հերկն աշնանն է արված: Հայտնի չե աշնան հերկի առավելությունը: Այդ մասին վկայում են հենց Լենինականի փորձադաշտի տրվյալները: Բայց վոր բերքի բարձրացման վրա ազդել է գութանով վարելը և շարքացանով ցանելը,—այդ էլ անկասկած է:

Հողօրհկոմատի հնգամյա պլանով մեր գյուղատնտեսությունն առաջիկա տարիներում նորանոր գործիքներով պիտի հարստանա: Չորս միլիոնից ավելի յե հատկացվում գյուղատնտեսու-

Թշան մեքենայացման համար: Բայց մենք պարտավոր ենք հենց այժմյանից բոլոր միջոցները ձեռք առնել, վոր մեր ունեցած և վոչ մի գործիք վոչ պարապ մնա և վոչ ել բիչ և անխնամ ոգտագործվի: Առաջին հերթին կոլլեկտիվ տընտեսությունները պիտի որինակ դառնան և ապացուցեն, վոր մեքենաների գործադրումը բարձրացնում է բերքատվությունը:

## 5.

Մեր գյուղատնտեսությունը տուժում է գանազան վնասատուներից ու հիվանդություններից: Մուկը, մորեխը, մրիկը, բամբակի չոռը և նման հիվանդություններ ու վնասատուներ մեզանից խլում են մեր բերքի մի խոշոր մասը: Այն, ինչ շատ յերկրներում վերացվել է ձեռք առնված կտրուկ միջոցների շնորհիվ, տարիների համառ և կազմակերպված պայքարի հետևանքով, մեր գյուղատնտեսության համար դեռ շարունակում է չարիք ու պատուհաս մնալ:

Ի՞նչքան վնաս ենք ստանում մենք այդ վնասատուներից և հիվանդություններից:

Խորհրդային Միության գյուղատնտեսությունը չոքաքանչյուր տարի մի միլիարդ ուղբլու վնաս է ստանում այդ հիվանդություններից ու վնասատուներից: Մկներն ու հիվանդություն-

ները (որինակ՝ մրիկը) մեզանից տարեկան մի քանի հարյուր միլիոն փութ հացահատիկ են խլում: Այս հարցի վրա ամեն մի գյուղացի լավ պիտի մտածի: Յեթե չուրաքանչյուր գյուղ իր շրջանում, իր հողերի սահմանում կովի վնասատուների դեմ, ապա մենք յետ խլած կլինենք մեր կորուստի մեծ մասը:

Ահա թե ինչ են ասում Հայաստանի գյուղատնտեսության գիտակ մարդիկ. «Տարեկան միջին հաշվով մեր ցանքսերի մինչև հարյուր հազար հեկտարը վնասվում է մկներից: Նրանք ավելի շատանում են, յերբ ձմեռը չորային է լինում և ընդհակառակը պակասում, յերբ խոր ձմեռ է լինում»:

Յեթե գյուղացին ինքը ոգնության չհասնի, վոչ մի միջոց չկա մկներից ազատվելու: 27 թ. 78,000 հեկտար տարածություն վարակված եր մկներով. յուրաքանչյուր հեկտարի վրա 30-ից մինչև 1500 բներ կային:

Հապա յեթե հաշվի առնենք մեր այգեգործության վնասատուներին: Պատահում են տարիներ, յերբ խնձորին ու ամանձը բոլորովին են փչանում ծաղկակերից ու պտղակերից: «Չկա մի բույս, վոր ավելի մեծ քանակությամբ թըշմի բույս, վոր ավելի մեծ քանակությամբ թըշմի ունենա, քան խաղողի վաղը», — ասում է այգեգործության ծանոթ մի մասնագետ: — Յեվ

բիշ չի պատահում, վոր հիվանդության հետե-  
վանքով խաղողի բերքի 70% -ն իսպառ վոչնչա-  
նում ե:

1928 թ. բամբակի «չոռ» հիվանդությունից  
իսպառ վոչնչացվել ե 1320 հեկտար տարածու-  
թյուն: Բամբակի ամբողջ դաշտերի կեսից ավե-  
լին վարակված ե յեղել «չոռով», և դրահետևան-  
քով բերքը պակասել ե, տեղ-տեղ չափազանց  
շատ:

Մենք դիտմամբ այսքան թվական տեղեկու-  
թյուններ բերինք, ընթերցողին համոզելու հա-  
մար թե ինչքան ենք մենք տուժում այդ հիվան-  
դություններից: Այստեղից ել հասկանալի յե  
դառնում անխնա և կազմակերպված պայքարի  
անհրաժեշտությունը մասսատուների դեմ, վորով  
մենք կարող ենք յուրաքանչյուր տարի բերքա-  
տվությունը 10 տոկոսով բարձրացնել, այսինքն  
նույն տարածությունից, հողի մշակման նույն  
յեղանակը պահպանելով մենք դարձյալ հնարա-  
վորություն ունենք մեր դաշտերի բերքատվու-  
թյունը բարձրացնելու:

Բոլորն ել ծանոթ են մրիկ հիվանդությանը:  
Պատահում են տարիներ, վոր այդ հիվանդու-  
թյան հետևանքով գյուղացին բերքի կեսն ել չի  
հավաքում: Իսկ տարի չի լինում, վոր նա մեր  
արտերում չերևա:

Ընթերցողին հայտնի ե, վոր մրիկի և նման  
հիվանդությունների դեմ կռվում են ֆորմալի-  
նով, պղնձարջասպի լուծույթով, վորի մեջ լվա-  
նում են սերմացուն, ապա, չորացնելուց հետո,  
սերմում: Մեր գրքույկի նպատակը չի բացա-  
տրել, թե ինչպես են պատրաստում պղնձար-  
ջասպի լուծույթը, կամ ինչպես են ֆորմալինով  
սերմացուն ախտահանում: Հետաքրքրվողը կա-  
րող ե տեղեկանալ համապատասխան գրքույկնե-  
րից, «Մաճկալից» և շրջանային ագրոնոմից:

Շատ տեղերում պղնձարջասպի լուծույթը  
ծանոթ ե: Բայց վորպեսզի մեր ընթերցողը մի-  
անգամայն իր կասկածը փարատի, մի որինակ  
ել բերենք, Նոր-Բայազետի գավառի Ձուլխաչ  
գյուղից:

Այդ գյուղի բնակիչ Վահան Առաքելյանը  
«Մաճկալում» կարդում ե, վոր մրիկից ազատ-  
վելու համար հարկավոր ե սերմացուն ցանելուց  
առաջ ֆորմալինով կամ պղնձարջասպով ախ-  
տահանել: Կարդում ե և վորոշում փորձել: Բայց  
թողնենք, վոր ինքը պատմի:

Յորենս ախտահանեցի այնպիսի չափերով,  
ինչպես «Մաճկալն» եր ասում: Յեվ թերթի  
տված խորհուրդը շատ հաջող անցավ: Պղնձար-  
ջասպն ազդեց ցորենիս վրա, և ամբողջ ամառվա  
ընթացքում արտումս մրիկով վարակված հասկ



չտեսան: Վերջում ստացա այնպիսի մաքուր ցորեն, վորի նման մինչև անցյալ տարի մեր գյուղում վոչվոր ել չեր տեսել: Բացի այդ ել ամեն մեկ հեկտարից 13 փութ ավել բերք ստացա: Բերքի ախտահանումը հնարավորութիւնն ե տալիս ել լավ բերք ստանալ, և սպիտակ ու համեղ հաց ուտել»:

Բայց, ինչպես ասում են, մի ծաղիկը գարունն չի բերում: Յեթե գյուղում միայն մեկը ֆորմալինով ախտահանեց, նա բոլորովին չի ազատվում այդ վտանգից: Յեկող տարի մրիկը նրա արտում կերևա: Հարկավոր ե ամբողջ գյուղով կովել մրիկի և նման հիվանդութիւնների դեմ:

Բերքատվութիւն բարձրացման դեկրետի 14-րդ կետն ասում ե, վոր շրջանայն ու գավառային խորհուրդների համազ ւմարներին իրավունք ե վերապահվում այս կամ այն շրջանի կամ գավառի համար այնպիսի վորոշումներ հրատարակել, վորով բնակչութիւնը պարտավորվի հասարակ ազրիկուտուր ձեռնարկումներ կատարել) սերմերի գտում, միջսակների վերացում, սերմերի ախտահանում, աշնանացանքի վրա անասուն չարածացնել, հողը քարերից ու թփերից մաքրել և այլն):

Ահա միայն այս ճանապարհով կարող ենք

կովել վնասատուների դեմ: Գյուղի համայնական ժողովի վորոշումաբ, վորպիսին հաստատվում ե շրջանի կողմից, անց ե կացվում այս կամ այն աշխատանքը, որինակ՝ պայքար վնասատու խոտերի դեմ, կամ ամբողջ գյուղով գտած սերմացու ցանելը: Չպիտի մոռանալ նաև մի հանգամանք:

Սորհրդային Միութիւնն Կենտգործկոմը 1929 թ. փետր. 8 ին մի վորոշում ե ընդունել «միասնական գյուղհարկի և միջակ գյուղացիութիւնն տուրքադրումը թեթևացնելու մասին»: Այդ վորոշման 5-րդ կետը վնասատուների և հիվանդութիւնների դեմ տարվելիք պայքարի հետ կապ ունի:

Այդ կետն ասում ե, վոր յեթե վորևե հողային հասարակութիւն բերքատվութիւնն դեկրետի մեջ հիշատակած ազրիկուտուր պարզ ձեռնարկումները գործադրում ե, այսինքն գտած և ախտահանած սերմացու յե ցանում, հողը քարերից ու թփերից մաքրում ե և այլն,—այդ հասարակութիւնն յուրաքանչյուր տնտեսութիւնն միասնարկի 10 տոկոսը զեղջվում ե, վորպես խրախուսանք, Իսկ յեթե անհատ տնտեսութիւններն են գործադրում, և վոչ ամբողջ գյուղը, ապա պիտի զեղջվի յուրաքանչյուր տնտեսութիւնից գանձվող միասնարկի միայն 5 տոկոսը: Գյուղմիասնարկի մասին յեղած վորոշումը

պիտի շահագրգռվածութունն առաջ բերի գյուղերում: Հողաչին հասարակութունները պիտի անցնեն բերքաավության դեկրետի մեջ հիշատակված ագրիկուլտուր պարզ միջոցների կիրառման, վորպեսզի հենց այս տարվանից նրանք ստանան վորոշման մեջ հիշատակած գեղջը:

Այժմ հասկանալի պիտի լինի, թե ինչ կապ ունեն պայքարը վնասատուների դեմ և միասնական գյուղհարկի մասին յեղած փետրվարի 8-ի վորոշումը:

Ագրիկուլտուր պարզ միջոցների շարքին և պատկանում և միջնակների վոշնացումը: Բայց այդ կապված և և վնասատուների դեմ տարվելիք պայքարի հետ, քանի վոր արտերի արանքում չեղած նեղ շերտը, վոր թողնված և չերկուհարևանի հողամասն իրարից վորոշելու համար, — այդ միջնակը հիվանդութունների և մկների բուն և դառնում:

Ո՞վ չի տեսել այն բազմաթիվ մոլախոտերը, վոր առատությամբ բուսնում են միջնակներում, վորոնք մի տեսակ «չեզոք գոտի» յեն կազմում չերկու հարևանի արտի միջև, քանի վոր վոշ մեկն և կուլում այդ խոտերի դեմ, և վոշ ել մյուսը: Այսպիսով մենք ինքներս ենք նպաստում և հարմարություն տալիս, վոր մուկն ու անպետք խոտը տեղ ունենան մեր արտի ամբողջ չերկայնքով:

Բամբակացան շրջանների գյուղացուն շատ լավ հաշտնի չե, թե ինչքան շատ և լինում «չոռը», չերբ արտի չեզրին բուսնում և մոլախոտը: Յեվ ընդհակառակը, արտի կողքերը մաքուր լինելուց հիվանդութունն ավելի թույլ և լինում:

Բացի այդ վնասից, միջնակների տակ ահագին սնարածությամբ հող և կորչում: Հապա յուրաքանչյուրը թող իր գյուղում հաշվի և կտեսնի, վոր շատ վայրերում միջնակների տակ իրար տեղը կորչում և միքանի տասնյակ, յերբեմն հարյուրի հասնող հեկտար տարածություն: Յեվ ինչքան պարարտ հողեր են դրանք, ինչքան ոգուտ կստանալինք, յեթե միջնակներն իսպառ վերացնեյինք:

Հիմնական հողաշինարարությունը շատ վայրերում, մանավանդ դաշտային գոտում, միջնակներն իսպառ վերացրել և: Բայց քիչ չեն այն դեպքերը, յերբ հողաշինարարությունից հետո ելի արհեստական կերպով ստեղծվում են այդ միջնակները, արտի քարը թափում են մի յեզրին, հարևանն ել նրա մոտ, և ահա նորից և ստեղծվում միջնակը:

Իհարկե կուլեկտիվը միջնակի մահացու թրշնամին և: Ել ի՞նչ կուլեկտիվ, յեթե հողը միացված չի: Իսկ հողը միացնել՝ նշանակում և և միջնակին վերջ տալ: Միջնակին կամ մարզին

վերջ տալ՝ նշանակում է մշակելի հողի տարածութունն ընդլայնել, վոր մեր պայմաններում առաջնակարգ նշանակութուն ունի:

Միջնակների վերացմամբ մենք արդելում ենք և նրա վրա բուսած մոլախոտերի տարածմանը արտի մեջ: Մենք չենք կարող պարծենալ մեր սերմացուի մաքրությամբ: Վոչ միայն տեսակավոր սերմացու չունենք, վոչ միայն մեր սերմացուն բազմաթիվ տեսակների խառնուրդ է, այլ և շատ կեղտոտ ու մոլախոտերի սերմերով հարուստ: Գննութունը ցույց է տվել, վոր մեր սերմացուն, շատ վայրերում մինչև 25 տոկ. կազմված է մոլախոտի սերմից, աղբի և քարի կտորտանքից:

Իսկ միջնակի վերացնելը նշանակում է մոլախոտի մշտական բնի քանդելը, ուրեմն և բերքի բարձրացում և մաքուր սերմացու:

## 6.

Բերքատվության բարձրացումն առանց պարարտացման հնարավոր չի: Յուրաքանչյուր տարվա բերքի հետ մենք հողից խլում ենք նրանում լեզած նյութերը և յեթե չվերադարձնենք, ապա մեր հողերն ուժասպառ կլինեն, ինչպես վ. ր շատ շրջաններում արդեն չեղել են:

Ի՞նչպես են մեզանում հողի պարարտացման

հարցը լուծում: Շատ գյուղերում այս կարգն է ընդունված. մի կամ յերկու տարի իրար վրա մի հողամասից բերք ստանալուց հետո հողը թողնում են հանգստի, «խամ» են անում կամ «հարոս», և այն ել միքանի տարով:

Ի՞նչ է ստացվում:

Հողամասը ծածկվում է մոլախոտերով: Կերի կարիքն ստիպում է գյուղացուն անասուններն արածացնել այդ հողերի վրա: Ուրեմն հողը հանգստանալու փոխարեն շարունակում է ուժասպառ լինել: Անմշակ մնալուց, տավարին կերցընելուց (և այն ել գարնանը, յերբ կերի կարիքը մեծ է, իսկ հողը դեռ խոնավ է), կերցնելուց տավարը արորում է հողի յերեսը, «կալ անում», ինչպես ասում են, և սնդագնում: Այդ վիճակում հողը չի կարող խոնավութուն ամբարելնրա կազմութունը չի ստացվում այնպիսին, ինչպիսին ցանկալի յե հացաբույսերի մշակության համար:

Իսկ վոր ամենագլխավորն է, գյուղացու հողի մի մասը մնում է անմշակ: Հայաստանի դավառների մեծ մասում հողի կեսը թողնվում է «խամ»-ի տակ կամ «ցել» է արվում, այսինքն. բերք չի ստացվում: Միայն դաշտային գոտում է, վոր հողերի ընդհանուր տարածության 70 տոկ. ամեն տարի ցանվում է:

Բայց մի ուրիշ յերևույթ ել ե նկատվում: Յերբ վոր մենք հետաքրքրվում ենք, թե գյուղի վճիռ խափն ե շատ «խամ» թողնում, տեսնում ենք, վոր առաջնութունը պատկանում ե չքավորին: Ամենից քիչ կուլակն ե հողը «խամ» թողնում կամ «ցել» անում: Յեվ այդ հասկանալի յե. նա միջոց ունի և կարողանում ե իր շնչաբաժին հողից, վոր տարածութիամբ հավասար ե չքավորի շնչաբաժնին, ավելի շատ յեկամուտ ստանալ:

Ուրեմն ինչքան մենք «խամ»-ի տարածութունը քչացնենք, ինչքան լաչնացնենք ցանքի տարածութունը, այնքան ել մենք այդ կատարած կլինենք չքավորի ու միջակի հողերի հաշվին:

Բայց առանց պարարտացման դժվար ե այդ լուծել: Մենք վերն ասացինք, վոր գլխավորապես կերի կարիքն ե ստիպում գյուղացուն հողի մի մասը «խամ» թողնելու, ինչպես և հողը հանգստացնելու պահանջը: Յեթե մենք հողը պարարտացնենք, ապա այդ կերպով հնարավորութուն կունենանք և պակսեցնելու «խամ» թողնվող հողի ընդհանուր տարածութունը, ուրեմն և ավելի շատ ցանք անել:

Բերենք մի յերկու որինակ՝ վերցրած մեր պայմաններից, վորպեսզի ապացուցենք պարար-

տացման ոգուտը, թեկուզ դժվար թե գտնվի մեկը, վ.ր կասկածի այդ բանում:

Ուլուխանլուի (Յերևանի գավառ) բամբակագործական «Շարք» ընկերութունը 1928 թ. 1500 հեկտար բամբակ եր ցանել: Ամեն մի հեկտար բամբակի հողը պարարտացրել էին 5 փուլ քուսպի ալյուրով և սուպերֆոսֆատով (հանքային պարարտանյութով): Աշնանը «Շարք» ընկերութունը կարողացավ ամեն մի հեկտարից ընդհանուր հաշվով 80 փուլ բամբակ ստանալ: Այնինչ նախորդ տարին մեկ հեկտարի միջին բերքը 64 փուլ ե յեղել:

Մեր բերած որինակը մի ուրիշ բան ել ե հաստատում՝ այն, ինչի մասին գրքույկի սկզբում ասացինք: 64 փուլ բամբակը համարյա միջին բերքի այն չափն ե, վոր ընդունված ե մեր բամբակագործության համար: Պարարտացումը հնարավոր ե դարձնում մի տարում բերքի միջինը 16 փութով ավելացնել և այն ել վոչ թե մի կամ յերկու անտեսության համար, այլ 1500 հեկտարի վրա, տալով 24 հազար փուլ ավելցուկ: Այս որինակի վրա թող լավ ուշադրութուն դարձնեն նրանք, վորոնք կասկածում են, թե մեզ կհաջողվի հինգ տարում բերքատվութունը 35% ով բարձրացնել:

Մի ուրիշ որինակ բերենք, այս անգամ Ար-

բաթ գյուղի կուլեկտիվից (Յերևանի գավառ): Դարձյալ 28 թվին այդ կուլեկտիվում մոխրով պարարտացնելու փորձեր են գնում: Փորձը ցույց է տալիս, վոր այդ պարարտացումը ցորենի բերքն ավելացնում է 16 տոկոսով, իսկ բամբակի բերքը — 10 տոկոսով: Բացի այդ կուլեկտիվն իր ունեցած անասունների աղբով պարարտացնում է հողերը՝ բամբակի համար, յուրաքանչյուր հեկտարին տալով 2.100 փութ գոմաղբ: Գոմաղբով պարարտացնելը բամբակի բերքը 20% -ով ավելացրել էր, այսինքն ստացել էին 500 փութ բամբակ սովորականից ավելի, վոր փողի վերածած՝ կանի 2250 ուռբլի:

Իսկ ի՞նչ էլին վառել, — կհարցնի ընթերցողը: Յերևի նրանց գյուղում փայտն առատ է: Վոչ. Արբաթն անտառից շատ և շատ է հեռու: Նրանք գնել էին մի վազոն փայտ և վճարել էին 320 ուռբլի: Յեթե այդ չանելին, ձմեռվա ընթացքում պիտի չեղած աղբը վառելին, ուրեմն և չպիտի կարողանային հողերը պարարտացնել: Կուլեկտիվը և՛ փայտ է վառել, վոր աթարից մաքուր է, և՛ ունեցել է 1900 ուռբլի մաքուր յեկամուտ գոմաղբով բամբակի դաշտերը պարարտացնելուց:

Այժմ անցնենք պարարտացման միջոցներին ու նրանց գործադրման:

Մեր նպատակը չի այս գրքուկով պարարտացման խնդիրը հիմնովին պարզաբանել: Մենք ընթերցողին հանձնարարում ենք հարցին ծանոթանալու համար կարգալ նաև ուրիշ գրքեր և ուսումնասիրություններ:

Պարարտացման հարցը, և այն ել գոմաղբով, շատ հեշտ է լուծել գյուղերում, վորոնք վառելիք ունեն: Յեթե այդտեղ աղբը դաշտ չեն տանում, ապա այդ պիտի բացատրել այն հնուց մնացած սովորություններով, վորոնցից մեր գյուղն իսպառ դեռ չի ազատագրվել:

Հայանի չե, վոր անցյալ տարվա աշնանացանի և գարնանացանի սերմանման կամպանիաների ընթացքում այդ գյուղերում բավականաչափ աշխատանք կատարվեց: Հրատարակած վորոշման համաձայն պարտադիր կարգով գյուղերից դաշտերը կրեցին փողոցներում և բակերում կուտակված աղբը: Այդ վորոշումն իր ուժի մեջ մնում է, և պարզ է, վոր հետագա տարիների ընթացքում աղբը դաշտը տանելը կդառնա սովորական աշխատանք գյուղի համար:

Ծանր է լուծել պարարտացման հարցը այն շրջանների համար, վորտեղ գոմաղբը գործադրվում է վորպես վառելիք: Սովորական պատասխանն այդ գյուղերում այն է, թե ի՞նչ վառենք ձմեռը:

Յերբի ճանապարհները միջանիսն են. հանքային պարարտանյութերի գործադրումից սկսած մինչև այդ շրջաններին վառելափայտ մատակարարելը, վորպիսին, ինչպես ցույց է տալիս Արբաթի կողբեկտիվի փորձը, շատ ել դժվար չի, մա՛ ավանդ դաշտային շրջանի գյուղերի համար, վորոնք մոտ են յերկաթուղուն:

Բայց կան և ուրիշ միջոցներ հողը պարարտացնելու համար: Ընթերցողը լսած կլինի կանաչ պարարտացման մասին, յերբ ցանում ենք միամյա բույսեր (վիկ, մաշ), վորպեսզի նրանց միջոցով հողը հարստացնենք պիտանի նյութերով:

Այդ ձևը շատ հաջող կիրառվում է յեվրոպական այն յերկրներում, վորտեղ սուր եր դըրված հողերի պարարտացման հարցը: Կանաչ պարարտացման համար մեղանում վերջին տարիներում մի շարք փորձեր են արվել հատկապես դաշտային գոտու գյուղերի համար:

Հայտնի չե, վոր հուլիսի կեսերին բամբակագործական շրջաններում հունձն արգեն վերջանում և դաշտն ազատվում է: Յեթե մենք խողանի վրա հենց այդ ժամանակ ցանենք թիթեռնածաղիկ բույսեր, ապա մինչև հոկտեմբերը յուրաքանչյուր հեկտարից կստանանք 130-ից մինչև 150 փութ յավ խոտ:

Արարատյան դաշտի վոռսդվոդ շրջաններում

մենք ունենք մոտ 60.000 հեկտար հացահատիկների ցանք: Յեթե մենք հունձն ավարտելուց խողանի վրա թիթեռնածաղիկ բույսեր ցանենք, ապա մենք հոկտեմբերին այդքան տարածությունից կստանանք 7 միլիոն փութ խոտ: Այդ նույն տարածությունից ստանում ենք այժմ համարյա նույն քանակությամբ դարման: Ստացած խոտով անասուններին կերակրելով, մենք այնքան աղբ կստանանք, վոր լիուլի հերիք է այդ շրջաններում բերքատվությունը կրկնապատկելու:

Կա և մի ուրիշ միջոց, վորը վերոհիշյալ ձևից տարբերվում է նրանով, վոր ստացած կանաչը վոչ թե կերցվում է տավարին վորպես խոտ և ապա ստացած աղբով պարարտացվում, այլ հենց կանաչը աշնանը վարում են և այսպիսով պարարտացնում:

Բացի այս միջոցներից կան և ուրիշները: Ուլուխանլուի բամբակագործական ընկերության անցյալ տարվա փորձը համոզում է, վոր բերքատվությունը կարելի չե բարձրացնել, գործադրելով և քուսպ ու հանքային պարարտանյութ: Ուլուխանլուն բամբակագործական շրջանում է և այնտեղ կատարածը նույնքան հնարավոր է և մյուս շրջանների համար:

Նախքան հանքային պարարտացման անց-

նելը մենք մի անգամ ել ենք ընթերցողի ուշադրութիւնը հրավիրում թիթեռնածաղիկ բույսերի մշակման և այսպես կոչված խոզանացանի վրա: Սակայն բացի դրանից գոյութիւն ունի և այսպես կոչված «արհեստական գոմադրը», վար պատրաստվում է ծղոտից (բուլաշից) և վորեւե ազոտ պարունակող պարարտանյութից:

Վերջերս մեզանում կատարված մի շարք փորձերը հաստատում են հանքալին պարարտանյութերի գործադրման ոգուտը: Բերքատուլութիւն բարձրացման դեկրետի 5-րդ կետը հրահանգում է հատուկ ուշադրութիւն դարձնել արհեստական պարարտանյութերի պատրաստմանը զարկ տալուն, «ինկատի ունենալով, վոր բերքատուլութիւն բարձրացման համար արհեստական պարարտանյութերի գործադրումը վճռական նշանակութիւն ունի»:

## 7.

Բերքի բարձրացման համար կարևոր նշանակութիւն ունի և հողաշինարարութիւնը:

Դեկրետը հրահանգում է հատուկ գումարներ հատկացնել հողաշինարարութիւնն արագացնելու համար: Բացի այդ հրահանգվում է «արտոնյալ պայմաններով հողաշինարարութիւն կատարել այն գլուղերում, վորոնք անցնում են

անտեսավարութիւն համայնական ձեւերին, նույնպես և գործադրում են հողագործութիւն բարելաված ձեւեր:

Այս ել մի ուրիշ արտոնութիւն է, վոր պիտի ստանան այն գլուղերը, վորոնք հենց անտեսութիւն մեջ գործադրելու յեն հողի մշակման նոր ձեւեր, կամ մտցնելու յեն ցանքաշրջանառութիւն և զարկ են տալու բերքատուլութիւն բարձրացման:

Պետք է հողաշինարարութիւնն այնպես տարվի, վոր նրա ընթացքում հողի մշակման, բերքի հավաքման և անասնաբուծութիւն համայնական ձեւերի հետագա զարգացումը չխանգարվի:

Իսկ ի՞նչ է նշանակում այդ:

Հողացրվածութիւն վերացում, հողերի մանր կտորների հավաքելն ու համախմբելը, վորով հեշտանում են գլուղատնտեսական աշխատանքները: Մի կամ յերկու կտորի վրա ավելի հեշտ է աշխատանք տանել՝ վարել, ցանել, հնձել, հողը պարարտացնել, քար ու մոլախոտ վոչնչացնել, առուն կանոնավորել, — քան այդ արվում է բազմաթիւ կտորների վրա: Մեզ համար կարևոր նշանակութիւն ունի և ջուրը. իսկ հայտնի յե, վոր հողացրվածութիւն վերացումն ու հիմնական հողաշինարարութիւնը նպաստում են, վոր քիչ ջուր կորչի, գոլորշիանա, ճահճուտներ կազմի և այլն:

Իեկրետան առաջարկում ե հողաշինարարության ընթացքում «այնպիսի միջոցների սխտեմ մշակել, վորոնք ապահովեն կողբկտիվ տնտեսությունները և հասարակ արտադրական կոոպերատիվների (մեքենատգտագործական, սերմաբուծական և նման ընկերություններ) անընդհատ աճումը»:

Հողաշինարարությունը պիտի նպաստի կողբկտիվների կազմակերպման: Ավելին. յեթե տվյալ գյուղում հողագտագործողների մի մասը ցանկություն ե հայտնում կողբկտիվ հողագործության անցնելու, ապա հողաշինարարությունն առաջին հերթին այդպիսի գյուղերումն ե կատարվում:

Կողբկտիվների թիվը յուրաքանչյուր տարի աճում ե. նրանց աճումը նշանակում ե և բերքատվության բարձրացման ավելի մեծ տոկոս: Յեթե անհատական տնտեսությունների համար դեկրետը սահմանել ե բերքի բարձրացման 35<sup>0</sup>/<sub>100</sub> հինգ տարվա ընթացքում, ապա կողբկտիվները նույն ժամանակաշրջանում բերքը պիտի բարձրացնեն 60 տոկոսով: Նույնը և խորհրդային տնտեսությունների համար:

Ինչո՞ւ չե այդ տարբերությունը:

Նախ այն պատճառով, վոր կողբկտիվ հողագործողներն ունի շատ առավելություններ, վոր-

րոնք հատուկ են մեծ տնտեսության: Իսկ հայտնի յե մի հեկտարի մշակումը, ինչպես և մնացած գյուղատնտեսական աշխատանքները մեծ տնտեսությունում ավելի եժան են լինում, քան վորք տնտեսությունում, վորտեղ հնարավոր չի բարդ մեքենաներ մտցնել և ստանալ այդ մեքենաների ոգուտը: Բացի այդ կողբկտիվ ավելի շատ մեքենա ունի և ավելի յե վարկ ստանում, վորը և նրան հնարավորություն ե տալիս բերքի չափն ավելի բարձրացնել:

Մենք ծանոթացանք Լուկաշենի կողբկտիվի ստացած ցորենի միջին բերքին և տեսանք, վոր այդ բերքը բարձր ե նույն շրջանի սովորական միջինից: Բայց յեթե պատճառն ենք փրնառում, տեսնում ենք, վոր կողբկտիվի մի հեկտարն ունի 170 ուղբու գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ: այնինչ նույն շրջանի անհատական տնտեսության մի հեկտարը նրանց մի յերրորդն ել չունի:

Կողբկտիվը պիտի որինակ ծառայի շրջանի անհատական տնտեսության համար: Յեթե նա բերքը պիտի բարձրացնի նույն չափով, ինչ վոր կողբկտիվի մեջ չմտած անհատական տնտեսությունն ե, ապա վորք պիտի լինի յերկուսի տարբերությունը, ել ինչպես պիտի կարողանան նրանք ոգտագործել ստացած վարկն ու մեքե-



նաները: Դրա համար ել բերքատուության բարձրացման 60 տոկոսը մի տեսակ քննութիւնն է կուլեկտիվներէ համար, վորի ընթացքում կ'պարզվեն կուլեկտիվներէ լաջն ու վատը:

Բայց դառնանք հողաշինարարության: Փորձերը ցույց են տվել, վոր հողաշինարարության հետևանքով և ընդարձակվում է մշակելի հողերի տարածութիւնը, և՛ բարձրանում է բերքատուութիւնը:

Հողաշինարարության ընթացքում ոգտագործվում են նոր հողեր, վորոնք մինչև այդ պիտանի չէին: Մի կողմից ջրային ցանցի կանոնավորումը հնարավոր է դարձնում նոր հողեր ջրել, իսկ մյուս կողմից ել գյուղացիք չորացնում են ճահճուտները և դարձնում պիտանի: Այդ ձևով մեր բամբակագործական շրջանում, վորտեղ հողաշինարարութիւնն ավարտված է, պիտանի չե՛ դարձել նոր հողերի զգալի տարածութիւն, վոր միքանի գյուղում հասնում է մինչ այդ չեղածի 10 տոկոսին:

Ասացինք, վոր հողաշինարարութիւնը բարձրացնում է և բերքի չափը: Ռուսաստանի Պսկովի նահանգում մի ուսումնասիրութիւն են կատարել, վորն ասացուցել է, թէ մինչև բերքատուութիւնը հողաշինարարված գյուղերում 17 տոկոսով բարձր է հարևան հողաշինարարված գյուղերից:

Ամենքի համար ել հասկանալի չե՛ թէ ինչից է ստացվում այդ տարբերութիւնը: Հենց վոր տեղեկանում են, թէ գյուղում հողաշինարարութիւնն է կատարվելու, դադարում են ամեն տարվա խնամքը հողի վրա թափելուց, նույնիսկ չեն պարարտացնում, սպասելով, վոր այդ հողն ուրիշ տնտեսութիւն կընկնի: Յե՛վ ընդհակառակը, յերբ ավարտվում է հողաշինարարութիւնը, յուրաքանչյուրն իր ստացած հողամասի քարերն է մարբում, դար ու փոսը հավասարեցնում, պարարտացնում, մի խոսքով՝ խնամքը կրկնապատկում:

Յեթէ հողաշինարարը լավ է ձեւել դաշտը, հարմար հողամասեր կտրատել, կանոնավորել ջրային ցանցը, նոր և ավելի լավ ճանապարհներ գծել, վորով գյուղացին ավելի կարճ ժամանակում կարող է բերքը տուն կրել, - յեթէ հողաշինարարն այդ աշխատանքը խնամքով է տարել, հենց հաջորդ տարվանից հողաշինարարութիւնն ոգուտը գյուղացին զգում է, վորպես բերքատուութիւն բարձրացում:

Սակայն հողաշինարարված դաշտից առաջին ոգտվողը դարձյալ կուլակն է լինում, վորովհետև նա միջոցներ ունի իր հողամասն ավելի լավ պարարտացնելու և սարքելու: Ճիշտ է նկատել հողաշինարարներից մեկը, վորն ասում է.

«Մանր և չքաւոր անհատական տնտեսութիւնները վոչ միայն չեն կարողանում բարձրացնել հողաշինարարութեան կարգով ստացած լավ ու մոտիկ հողերի բերքատուութիւնը, այլ շատ անգամ կիսով տալով կամ թույլ մշակութեամբ զբոսնում են նրանց բերքատուութիւնը»:

Միակ յելքը հողի կոլլեկտիվ ձևով մշակելի է: Միայն և միայն այս ճանապարհով գյուղի չքավորն ու միջակը կարող են իրենց տնտեսութիւնը բարձրացնել և ոգավել իրենց տրված լավ ու մոտիկ հողերից, արտադրութեան միջոցներից և այն ոգնութիւնից, վոր ցույց է տալիս կոլլեկտիվին խորհրդային իշխանութիւնը:

- 8.

Բերքի բարձրացման ղեկընտով չեր կարելի նախատեսել այն բոլոր միջոցները, վորոնցով հնարավոր է այս կամ այն շրջանում բերքատուութիւնը բարձրացնել: Խորհրդային Միութիւնը լայնածավալ մի յերկիր է, վորի գյուղատնտեսութիւնը շատ բազմազան է: Տարբեր են մշակվող բույսերը, մշակութեան յեղանակը, գոյութիւնն ունեցող միջին բերքը, մեքենաներով ապահովված լինելը և այլն:

Նույնը և Հայաստանի համար: Այն ինչ շատ անհրաժեշտ է մեր դաշտային շրջանի գյուղա-

տնտեսութեան համար, կարող է ավելորդ լինել լեռնային շրջանի գյուղատնտեսութեան համար: Որինակ՝ ջրելու հարցը: Յեւ զրա համար էլ գանազան շրջաններում պիտի մշակվեն տեղի գյուղատնտեսութեան համապատասխան միջոցներ, վորոնց վործադրումն ամբողջ հանրապետութեան համար կտա բերքատուութեան բարձրացման 35 տոկոսը:

Յուրաքանչյուր գավառի համար այդ տոկոսը կարող է տարբեր լինել ըստ տարիների: Որինակ՝ Դարալագյազը կարող է ծրագիր կազմել այս տարի բերքատուութիւնը բարձրացնել 5 տոկոսով, իսկ Լենինականը՝ 10 տոկոսով: Բացի այդ կարող են մի կամ յերկու գավառում կլիմայական աննպաստ պայմաններ լինել: Դրա համար էլ պարզ պիտի լինի, վոր յուրաքանչյուր տարի 7 տոկոսով բերքատուութիւնը բարձրացնելն որենք չի ամեն մի գավառի, շրջանի կամ գյուղի համար:

Իհարկէ, այս չի նշանակում, թե մի գյուղ կամ շրջան կարող է հայտարարել, թե ղեկընտն իրեն չի վերաբերում, վորովհետև ղեկընտն մեջ իրենց շրջանի անունը գրված չի: Այսպիսի բան չի յել լինի: Յեթե այդ գյուղում շարքացան կա, ապա ուրեմն պիտի բանեցնել յեթե շրջանի վորեւ գյուղ անհրաժեշտ չափով սերմատիչներ

ունի, ուրեմն այդ գյուղի ընդհանուր ժողովը կարող է վորոշում հանել պարտադիր սերմ-  
զտման մասին և այսպիսով որինակ դառնալ  
ըրջանի բոլոր գյուղերի համար:

Ի այց կան և ուրիշ միջոցներ, յուրաքան-  
չյուր ըրջանի համար տարբեր, վորոնք շատ կնը-  
պաստեն բերքատու թխան բարձրացման: Հենց  
որինակ աշնանացանն արածացնելու կամ, ինչպես  
գյուղացիք են ասում, քու անելու խնդիրը: Ինչ-  
քան են տուժում մեր ցանքերը տավարն անկա-  
նոն արածացնելուց. միթե սա բիչ վրաս է: Յե-  
թե մեր ցանքը փրկենք այսպիսի վնասատուներից,  
մենք ահագին ոգուտ կստանանք:

Վերցնենք ճանապարհների հարցը: Վոչ մի-  
այն անկանոն ճանապարհներ ունենք, այլև դը-  
րանք այնպիսի տեղերով են անցնում, վոր վնաս-  
ում են արտը, շատ անգամ միջից կտրում անց-  
նում: Լեռնային գյուղերի մեծ մասը խուրճը  
կրում է գրաստով: Ինչքան է թափվում ճանա-  
պարհին, ինչքան են ուտում հենց կրողները, և  
ինչքան դանդաղ են տանում, շատ անգամ հըն-  
ձածի կեսը մնում է անձրևի տակ, ծլում ու  
սևանում:

Իսկ բերքատու թխունը շատ կբարձրանա,  
յերբ հանդ տանող ճանապարհը կարողանանք  
սարքել այնպես, վոր խուրճը սայլով կրենք:

Վերցնենք մեր կալերը, կասելու յեղանակը, պա-  
պենսկան կամբը: Քանի մարդ պիտի աշխատի,  
քանի լուծ յեզ՝ մի որվա հաշանի համար: Յեթե  
մենք հնարավորութուն ստեղծենք շատ չնչին  
փոփոխություն ստեղծելու կալսելիս, որինակ՝  
կալի միջի խրած գերանից կապենք յերկար ձող  
ու ձողից ել կամները, այնպես, վոր մի գույգ  
յեզով կարողանանք 2-3 կամբը պատացնենք,—  
ահագին ոգուտ տնտեսած կլինենք:

Ի բերքատու թխան բարձրացման դեկրետն,  
ի արկե, չեր կարող նախատեսել այս բոլոր ման-  
րամասնությունները, բայց նա տեղերին իրա-  
վունք է վերապահում գործադրելու և այն մի-  
ջոցները, վորոնք կնպաստեն բերքատու թխան  
բարձրացման:

Այդ բոլոր վորոշումները չպիտի մնան թրդ-  
թի վրա: Ինչպես վոր գյուղական կատարածունե-  
րը հսկում են գյուղխորհրդի հանած վորոշումների  
կատարմանը, այնպես ել, ըստ նոր դեկրետի,  
գյուղերում խորհուրդներին կից լինելու յեն այս-  
պես կոչված ագրոնոմիական կատարածուններ,  
«գյուղացիական տնտեսությունների մեջ ագրո-  
նոմիական հասարակ ձեռնարկումների կատար-  
ման ընթացքին հետևելու համար», ինչպես աս-  
ում է 15-րդ կետի դ. հոդվածը:

Ընթերցողին հայտնի չե, վոր արդյունաբե-

րության մեջ արտադրական խորհրդակցությունները մեծ աշխատանք եր տանում: Բանվորները քննում են իրենց գործարանի արտադրության պլանը, թերություններն են ուղղում, նոր առաջարկներ են անում: Բանվորներից շատ շատերը, այսպես կոչված գյուտարարները, առաջարկում են գործիքի նոր ձևեր, կամ գտնում են մի նոր մեքենա, մեքենայի մի մասը, վորի գործադրումից արդյունաբերությունն անազխի յեկամուտ ե ստանում:

Դեկրետն առաջարկում ե գյուղական և շրջանային գործադիր կոմիտեյին ու խորհրդին կից կազմակերպած գյուղատնտեսական սեկցիաների աշխատանքը տանել այնպես, ինչպես արտադրական խորհրդակցությունները: Գյուղխորհուրդների գյուղատնտեսական սեկցիաները շատ տեղերում թույլ են աշխատում. անելիքը չգիտեն, ղեկավարությունը թույլ ե, պակասում ե կապը ագրոնոմի հետ: Դեկրետն առաջարկում ե ուժեղացնել սեկցիաների աշխատանքը, «նրանց կազմի մեջ մտցնել կուլեկտիվ տնտեսությունների անդամներին և կուլտուրական տնտեսավարություն ունեցող անհատական տնտեսություն վարող չքավորներին ու միջակներին»:

Յուրաքանչյուր սեկցիա պիտի քննի առաջին հերթին գյուղում բերքատվությունը բարձ-

րացնելու այն միջոցները, վոր ամենից հարմար են տվյալ գյուղի համար: Այն բոլոր առաջարկները, վոր կարվեն այդ նպատակով, և վոր իսկապես կնպաստեն բերքատվության բարձրացման, պիտի ձևակերպեն սեկցիաները և ներկայացնեն գյուղխորհրդի հաստատության:

Դեկրետը հրահանգում ե «խորհրդային իշխանության կողմից գյուղատնտեսությանը հատկացված նյութական միջոցների ոգտագործումը հասարակական նույնպիսի կոնտրոլի լենթարկել, ինչպես բանվորներն արդեն քաղաքում կոնտրոլի լեն լենթարկում կապիտալ շինարարությունը»: Բացի այդ անհրաժեշտ ե համարվում բերքատվության հարցերի վերաբերմամբ գյուղացիական լայն համագումարներ և կոնֆերենցիաներ հրավիրել, մանավանդ շրջաններում, այդ կոնֆերենցիաները նշանակելով գյուղատնտեսական ցուցահանդեսների, մրցումների և այլ ժամանակ:

Վերցնենք մի օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչքան տարբեր կարող են լինել այն միջոցները, վորոնք վերաբերում են գյուղական շրջաններում բերքատվությունը բարձրացնելուն: Հաստատանի դաշտային շրջանի համար առաջնակարգ նշանակություն ունի ջրի հարցը:

Այս շրջանում առանց ջրի կանոնավոր ոգ-

տագործման բերքա վության բարձրացումը շատ կըժվարանա: Չրի ոգտագործումը շատ սերտ կապվում է հողի մշակման ձևերի հետ: Յեթե մենք բարեկալենք հողի մշակման տեխնիկան, այսինքն միջոցներ ձեռք առնենք, վոր մեր հողերից ջուրն իզուր տեղը չգոլորշիանա, այլ ամբարածից միայն կուլտուրական բույսերն ոգտըվեն, մենք կանոնավորած կլինենք Չրի ոգտագործման հարցը, և միևնույն ժամանակ բերքատվության բարձրացումն ապահոված:

Տեանենք՝ դաշտային գոտու մի հեկտարը ինչքան է ջուր ստանում արհեստական վոռոգման կարգով և մթնոլորտային տեղումներից: Մարդարաբաղի և դռերի վոռոգման նախագծով ամեն մի հեկտարին պիտի տրվի 3000 խորանարդ մետր ջուր: Բայց այդ հողերի վոռոգումը չի կատարվելու նահապետական այն սիստեմով, այնպիսի առուններով, ինչպիսին այժմ մենք ունենք, յերբ Չրի մի խոշոր մասը գոյորշիանում է, ճահճանում, իզուր տեղը կորչում նախքան արտին հասնելը: Այսպիսով մեր մի հեկտարին այժմ շատ ավելի ջուր է ընկնում, քան նախատեսված է ծրագրով:

Իսկ ինչքան է ստանում նույն հեկտարը մթնոլորտային տեղումների շնորհիվ (ձյուն, անձրև, յեղյամ). դարձյալ 3000 խոր. մետր: Նույն-

իսկ գետության վերջին տեխնիկայով կառուցված վոռոգման ցանցը, դրան ավելացրած և մթնոլորտային տեղումից ստացված ջուրը, շատ և շատ է մի հեկտարի համար, վորովհետև մի հեկտարը բույսերի միջոցով գոլորշիացնում է 400 խոր. մետր, այնինչ միայն մթնոլորտային տեղումներից մենք ստանում ենք 3600 խոր. մետր, դեռ չհաշված արհեստական վոռոգումը, վոր նույնքան ջուր է տալիս:

Այս հաշիվը ցույց է տալիս, թե մեր բույսերն ինչքան քիչ են գոլորշիացնում, և ինչքան ջուր իզուր տեղը կորչում է: Բայց թողնենք մթնոլորտային տեղումները. հարցն այժմ արհեստական վոռոգման կարգով ստացած Չրի մասին է: Մեր ունեցած Չրի պաշարը հերիք է, վոր ջրենք չերկու անգամ ավելի տարածութուն, քան այժմ ենք ջրում:

Ահա թե ինչ առաջնակարգ նշանակութուն ունի Չրի ոգտագործման խնդիրը: Մեր ջուրը շուայլ և անխնամ ոգտագործելով՝ մենք հարվածում ենք այն հիմքին, վորի վրա չե կառուցված մեր դաշտի գյուղատնտեսությունը:

Կապիտալիստական չերկրները, մանավանդ Ամերիկան այս ասպարիզում խոշոր առաջադիմություն են արել: Այնտեղ չերկրագործությամբ զբաղվում են նույնիսկ այնպիսի շրջաններում,

վորտեղ վոչ միայն արհեստական վոռոգում չկա, այլև մթնոլորտային տեղումների տարեկան քանակը մեր դաշտավայրից ավելի քիչ է: Այսպես կոչված «չոր լեռկրագործութունը» բացառապես տարվում է անջրդի հողերում, միայն մթնոլորտային տեղումներից թափվող խոնավութան հաշվին:

Ինչհամար ե նրանց գաղտնիքը, — բացառապես հողի մշակութան մեջ: Գործիքներով և մեքենաներով հարուստ ամերիկյան ֆերմերը կարողանում է հողի վերին շերտը միշտ փոխար պահել, թույլ չտալ, վոր կոշտանա և կարծրանա, վորովհետև այդ դեպքում է, վոր հողի մեջ ամբարված խոնավութունն արագ գոլորշիանում է:

Մենք դեռ այդքան հարուստ գյուղատնտեսութուն չունենք և դրա համար ել այդ համարում ենք հեռակա տարիների աշխատանք: Բայց մենք հենց այժմ ել կարող ենք և պարտավոր ենք միջոցներ ձեռք առնել, վոր շուրը խնայողաբար գործածվի: Ինչպես արտադրական խորհրդակցություններում բանվորները միջոցներ են գտնում գործարանում մեքենաների յուղը խնամքով գործածելու, այնպես ել դաշտային շրջանի գյուղերի գյուղակցիտները պիտի վորոշումներ անեն ջրի ոգտագործումը կանոնավորելու: Այժմս ել մենք կարող ենք անցնել այնպիսի միջոցների

կիրառման, վորի հետևանքով դաշտային շրջանում շուրը և խնայած կլինենք և բերքն ավելացրած: Ահա թե ինչ է առաջարկում «չոր» լեռկրագործութան ծանոթ մեր ազրոնոմներից ընկ. Պ. Քալանթարյանը\*): —

«Յորենը ցանելուց հետո գյուղացին իր պարտքը կատարած է համարում, իսկ լավագույն դեպքում նրա ծլելն արագացնելու համար ցանած և չկանաչած արտը լերկու, յերեք, յերբեմն ել չորս անգամ ջրում է՝ հողի կեղևը փափկացնելու և ցորենի ծիլերի հողից դուրս գալը հեշտացնելու համար: Մինչդեռ, փոխանակ ջրելու, բավական է առաջին շուրը տալուց հետո հողի յերեսին կապված կեղևը փխրացնել, ինչպես այդ արվում է բամբակի վերաբերմամբ: Հողի այսպիսի մշակութունը կարելի յե և պետք է կատարել նաև գարնանը, վորի հետևանքով թե մոլախոտերը կվոչնչանան, և թե ջրի մեջ խնայողութուն կլինի: Յեվ վորպեսզի հնարավոր լինի աշնանացանները գարնանը մշակել, անհրաժեշտ է ցանքը կատարել շարքացաններով շարքերի միջև տարածութունը փոցխելու համար»:

Ջրի ոգտագործման խնդիրը վոչ միայն մի որինակ եր ցույց տալու, թե ինչպիսի տարբեր

\*) Կարգա «Բերքատվութան բարձրացումը» ընկ. Պ. Ք.-ի հոդվածը, «Գյուղ. կյանք» № 1, 1929 թ.:

ճանապարհներով պիտի մեր գյուղատնտեսութեան բերքատուութիւնը բարձրացնենք. ճանապարհներ, վորոնց մասին դեկրետը միայն ընդհանուր կերպով է ասոււմ, այլև ապացուցելու, թէ ինչքան շատ անելիքներ կան հողագտագործողների առաջ: Վորովհետև պարզ է, վոր ինքը գյուղացին առաջին հերթին պիտի կատարի այն բոլոր ձեռնարկումները, վոր տվյալ գյուղի համար ամենից ավելի անհրաժեշտ են:

Կրկնուժ ենք, վոր «չոր յերկրագործութեան» կիրօժուումը մեզնում հետագայի հարց է: Բայց այժմեական է, վոր գյուղատնտեսական սեկցիաները քննեն և ընդհանուր ժողովին առաջարկեն այն բոլոր միջոցները, վորոնք տանում են դեպի ջրի կանոնավոր ոգտագործումն ու խնայողութիւնը, առանց վորի դժվար է յեղած ցանքերի բերքատուութիւնը բարձրացնել և բոլորովին անհնար հողաշինարարութեան կարգով պիտանի դարձած հողերի մշակումը:

## 9.

Բերքատուութեան բարձրացման դեկրետը հատուկ կետերով հրահանգում է առանձին ուշադրութիւն դարձնել գյուղատնտեսութեան մեջ ագրոտեխնիկայի բարելաված ձևերի գործադր-

մանը, ինչպես և գյուղատնտեսական գիտելիքները բնակչութեան մեջ տարածելուն:

Ագրոտեխնիկայի բարելաված ձևերը գյուղացին կարող է ստանալ ագրոնոմից, նրա կատարած փորձերի ու ցուցադրական աշխատանքների արդյունքից, ինչպես և այն գիտական հետազոտական կազմակերպութիւններից (փորձադաշտեր, սելեկցիոն կայան և այլն), վորոնց նպատակն է սպասարկել գյուղատնտեսութեանը:

Կասկած չկա, վոր շատ շրջաններում ագրոնոմները ծանրաբեռնված են այնպիսի աշխատանքներով, վորոնք նրանց անմիջական պարտականութիւնը չեն: Բայց նրանց աշխատանքն արդյունավետ դարձնելու համար դեռ շատ անելիքներ ունենք: Վրոմանք փոխադրական միջոց չունեն, վոր գյուղից գյուղ գնան, ագրոկայանը լրիվ կանոնավորված չի, ինքը ագրոնոմն ապրում է բնակարանային այնպիսի պայմաններում, վոր դժվարացնում է նրա աշխատանքը: Յերբեմն գյուղում չի ճարվում հասարակ մի սենյակ, վորտեղ նա կարողանա իր գործիքները տեղավորի և անց կենա ընթացիկ հետազոտական աշխատանքներին և կարողանա նյութ պատրաստել գյուղատնտեսական դասընթացքների ունկնդիրների համար: Դեռ շրջաններ ունենք, վոր ագրոնոմներ չունեն, և չենք ել կարող սել, վոր շրջաններում ու գավառում աշխատող

բոլոր ագրոնոմներն իրենց վորակով ու պատ-  
րաստութեամբ համապատասխանում են այն  
պահանջներին, վոր առաջադրում են նրանց թե  
շրջանի գյուղացիութունը և թե, ժանտվանդ,  
բերքատվութեան բարձրացման հետ կապված  
խնդիրները:

Բայց և այնպես մենք չեղած ուժերով և  
նյութական հնարավորութուններով ե, վոր պի-  
տի հասնենք 35 տակոսին. Դեկրետն առաջար-  
կում ե և մի շարք միջոցներ, վորոնք թե լա-  
վացնելու յեն ագրոնոմի վիճակը և թե նպաս-  
տելու, վոր նրա կատարած աշխատանքից գյու-  
ղացիութունը լիովին կարողանա ոգտովել:

Դեկրետն առաջարկում ե «արտադրութեան  
մեջ աշխատող ագրոնոմիական, հողաշինարարա-  
կան և անասնաբուժական պերսոնալի նյութա-  
կան վիճակը բարելավել, ագրոնոմիական պեր-  
սոնալին պարզևատրել իրենց գործունեյութեան  
շրջանում բերքատվութունը և անասնապահու-  
թեան արդյունավետութունը բարձրացնելու ուղ-  
ղութեամբ ձեռք բերած նվաճումների համար,  
յերկու տարվա ընթացքում ագրոնոմիական  
պերսոնալին փոխադրական միջոցներ տրամա-  
դրել և վերջապես, ագրոնոմի աշխատանքի  
բնույթը փոխել այնպես, վոր նա սերտորեն  
կապվի գյուղացիական մասսայի հետ, արտա-

դրական խորհրդակցութունների, կոնֆերեն-  
ցիաների, գյուղացիական հասարակական կազ-  
մակերպութունների, գյուղատնտեսական և ան-  
տառային աշխատավորների միութեան միջոցով,  
և դառնա գյուղատնտեսական արտադրութեան  
բարելաված ձևերի իսկական կազմակերպիչը:

Շատ բարձր և պատասխանատու աշխատանք  
ե դրվում ագրոնոմի վրա: Յեվ վորպեսզի նա  
դառնա գյուղատնտեսական արտադրութեան  
բարելաված ձևերի իսկական կազմակերպիչը,  
նրան տրվում ե այն լայն աշակցութունը, վո-  
րի մասին շատ վորոշ ասում ե դեկրետը:

Սակայն բերքատվութեան բարձրացումն ա-  
ռանց գյուղացիութեան մեջ ագրոնոմիական գի-  
տելիքներ տարածելուն հնարավոր չե: Գյուղա-  
ցին պիտի տեղյակ լինի վոչ միայն այն նպա-  
տակին, վորի համար բարձրացվում ե բերքա-  
տվութունը, այլև պիտի կարողանա իր տնտե-  
սութեան մեջ կամ կողլեկտիվում կիրառել ագրո-  
նոմիական տեխնիկայի բարելաված ձևերը: Հո-  
ղի մշակման նոր ձևը պահանջում ե տարրական  
ծանոթութուններ հողի կազմութեան մասին,  
առանց վորի գյուղացին չի կարող հասկանալ  
հողի վերին շերտը փուխը պահելու անհրաժեշ-  
տութունը:

Այդ նպատակով դեկրետն առաջարկում ե՝



«վոչ ուշ, քան յեկող ուսումնական տարվա ըսկըզբից, գյուղական առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցներում գյուղատնտեսական, տարրական կրթություն կազմակերպել և դրա ուսուցումը լավ հիմքերի վրա դնել գյուղացիական յերիտասարգական դպրոցներում: Առաջիկա տարվան ձմռան ընթացքում ագրոկոչայաններին կից կարճատև կուրսեր կազմակերպել՝ գյուղական ակտիվին, գյուղատնտեսական բանվորներին և առանձնապես գյուղացիական յերիտասարգությանը ագրոնոմիական կրթություն տալու համար: Ագրոտեխնիկայի և խոշոր կոլլեկտիվ հողագործություն կազմակերպելու հարցերի վերաբերմամբ պետական-հանրամատչելի եժան բրոշյուրներ հրատարակելն ու գյուղում լայն չափով տարածելն ապահովել»:

Ահա միջոցներից գլխավորները, վերոնց միջոցով կարող ենք գյուղացիության գյուղատնտեսական գիտելիքների չափը բարձրացնել, առանց վորի բերքատվությունը բարձրացնել չի կարելի:

## 10.

Մենք ծանոթացանք ագրոնոմիական այն պարզ ձեռնարկումների հետ, վերոնցից չուրաքանչյուրը մատչելի յե չքավոր ու միջակ գյուղ

դացու համար: Ինչ արդյունք կստացվի, յեթե մենք կիրառենք այն հասարակ ձեռնարկումները, վորի մասին ասվում ե բերքատվության բարձրացման դեկրետում:

Հնգամյակի վերջում այդ միջոցների կիրառումն ամբողջ Միության մեջ մեզ կտա մեկ միլիարդ փութ հաց: Սերմերի գտումը, ախտահանումը, յեղած մեքենաների լրիվ ոգտագործումը, պարարտացումը, մոլախոտերի և վասատուների դեմ տարվելիք պայքարը, — ահա այսպիսի պարզ միջոցների արդյունքն ե այդ մի միլիարդ փութը: Յեթե սրա վրա ավելացնենք այն, ինչ հնգամյակի վերջում ստանալու յենք խորհրդային խոշոր տնտեսություններից, ցանքերի տարածության ավելացումից և կոլլեկտիվների բարձր բերքատվության հետևանքով, — ապա ավելցուկի քանակը շատ և շատ կլինի:

Սակայն միթե գյուղատնտեսության վերակառուցումը միայն այսպիսի հասարակ ձեռնարկումների ճանապարհով պիտի լուծվի: — Իհարկե վոչ:

Տարեցուտարի աճող արդյունաբերությունը գյուղատնտեսության կարիքների համար ավելի շատ մեքենաներ ու գործիքներ կտա, այսինքն մեր գյուղատնտեսությունն այնպիսի հիմքի վրա կդնի, վոր յեթե մենք ագրոնոմիական հաստ-

րակ ձեռնարկումներն սպառենք, բերքատու-  
թյունը վոչ միայն կպակասի, այլ հսկայական  
քաջերով կառաջանա:

Մեր գյուղատնտեսության մեջ բարդ մե-  
քենան ու գործիքը դեռ քիչ դեր են խաղում:  
Այն ժամանակ, յերբ Գերմանիայում յուրաքան-  
չուր հեկտարին ընկնում է 74 ուրբուռ մեքենա,  
մեզանում ինն անգամ պակաս է: Իսկ գերմա-  
նական գյուղատնտեսության բարձր բերքա-  
տուությունը պայմանավորված է բարդ ու կա-  
տարելագործված մեքենաների աշխատանքի և  
հանքային պարարտացման հետ:

Հնգամյակի վերջում բարձրացող գյուղա-  
տնտեսությունը կարիք է ունենալու մեծ քա-  
նակությամբ մեքենաների և գործիքների: Յեզ  
ըստ ծրագրի մեր արդյունաբերությունը հենց  
այդ ժամանակ այսինքն հնգամյակի վերջում  
տալու չէ 610 միլիոն ուրբուռ գյուղատնտեսա-  
կան գործիքներ ու մեքենաներ:

Ահա թե ինչպես է շաղկապվում բերքա-  
տուության բարձրացումը, գյուղատնտեսության  
վերելքը մեր յերկրի ինդուստրիացման հետ:  
Բերքատուության բարձրացմամբ մենք ապահովում  
ենք մեր արդյունաբերությունը, քաղաքներն ու  
արդյունաբերական կենտրոնները հացով ու  
գյուղատնտեսական գործիքներով: Զարգացող

արդյունաբերությունն իր հերթին գյուղատնտե-  
սությունն ապահովում է անհրաժեշտ քանակի  
մեռյալ ինվենտարով և, բացի այդ, նրա հետա-  
գա զարգացումը կապում մեքենալի աշխատան-  
քի հետ: Ինքը գյուղատնտեսությունն ավելի  
շատ մեքենա ստանալով, այլ կերպ ասած՝ մեքե-  
նացացման յենթարկվելով, բերքատուության  
բարձրացման աչնպիսի թոփշքներ կանի, վորի  
համեմատությամբ այսորվա մեր պարզ ձեռնար-  
կումները շատ համեստ են:

Կարող են ասել, վոր հնարավոր չի, վոր  
արդյունաբերությունը չի կարող այդ չափի  
գյուղատնտեսական մեքենա տալ: Բայց այսորվա  
մեր փորձը ցույց է տալիս, վոր այդ անհնարին  
չէ: Անցյալ տարվա մշակած հնգամյա պլանը  
նախատեսում էր 1931 թ. գյուղատնտեսական  
մեքենաների արտադրությունը հասցնել յերկու  
հարյուր ուրբուռ: Իսկ այս տարի մենք սրդեն պատ-  
րաստել ենք 190 միլիոն ուրբուռ գյուղատնտեսա-  
կան գործիքներ, այսինքն հինգ տարվա ծրա-  
կան գործիքներ, այսինքն հինգ տարվա ծրա-  
գրածը մի տարում հնք կարողացել իրագործել:

Այս փաստը մեզ համոզում է, վոր մեր  
արդյունաբերությունը լիուլի կբավարարի գյու-  
ղատնտեսության կարիքները և հնգամյակի վեր-  
ջում մի հեկտարն ավելի շատ գործիք ու մեքե-  
նա կունենա, քան այժմ:

Այսքանը բավական չի: Հարց ե առաջա-  
նում՝ արդյոք միայն տեխնիկայի զարգացմամբ  
հնարավոր ե մեր գյուղատնտեսության անար-  
գել զարգացումն ապահովել: Ի՞նչ ենք մենք  
տեսնում կապիտալիստական չերկրների գյուղա-  
տնտեսության մեջ հենց, որինակ, Ս.մերիկայում,  
վորտեզ մեքենան չուրաքանչյուր տարի ավելի  
և ավելի չե բարդանում, հասարակից հասնում  
այնպիսի մեքենաների, վորոնք միաժամանակ  
հնձում են, կալսում, դարմանը հակեր կապում,  
ցորենը գտում և լցնում միանման պարկերի  
մեջ: Յե՛վ ի՞նչպիսի արագությամբ... Այդ մեքե-  
նան, վորին ամերիկացիք կոչում են «կոմբայն»,  
կարողանում ե մի որում 20 հեկտար տարա-  
ծությամբ արտը հնձել ու կալսել: Նրա ար-  
գյունքը լինում ե այն, վոր չուրաքանչյուր փութ  
ցորենի ինքնարժեքը 10-11 կոպեկով ընկնում  
ե: «Կոմբայնը» ահագին հեղաշրջում ե առաջ  
բերել ամերիկյան գյուղատնտեսության մեջ:  
Այնտեղ շատ շրջաններ կան, վորտեղ բերքի  
կեսը հավաքում են այդ մեքենայի միջոցով:

Սակայն «կոմբայնը» ձեռնտու յե միայն  
մեծ տնտեսություն ունեցողներին: Նա, ով 150  
հեկտարից պակաս հող ունի, նրան ձեռնտու չե  
այդ մեքենան ձեռք բերել: Իսկ մեծ տնտեսու-  
թյուն ունեցողը բարդ մեքենաներ գործադրելով

իջեցնում ե մթերքի ինքնարժեքը, ցորենն ավե-  
լի շուտ շուկա դուրս բերում և ավելի եժան  
զնով: Մանր տնտեսություն ունեցողը չի կա-  
րողանում դիմանալ այդ մրցումին և նա կամ  
ծախում ե իր հողը, կամ մի կերպ իր գոյու-  
թյունն ե քարշ տալիս:

Ահա թե ինչ ավերածություն ե անում  
բարդ մեքենան կապիտալիստական չերկրների  
գյուղատնտեսության մեջ, այնտեղ, ուր հողի  
սեփականությունն անխախտ որենք ե:

Մեր պայմաններում բարդ մեքենայի մուտ  
քը վոչ միայն այդ ավերածությունը չի ա՛րի,  
այլև նա մանր տնտեսություններին իմի յե հա-  
ժախմբում կողբկտիվի մեջ: Տրակտորը «կոմ-  
բայնից» ավելի հասարակ և եժան մեքենա յե:  
Սակայն տրակտորն անգամ կարողանում ե  
դառնալ այն սկզբնական աստիճանը, վորով  
վորպես մեքենատգտագործական ընկերություն,  
չքավոր ու միջակ տնտեսությունները կարողա-  
նում են մի յերկու աստիճան ել բարձրանալ և  
հասնել գյուղատնտեսական խառն կողբկտիվի:  
Մենք վոչ միայն չերկյուղ չունենք այսպիսի  
բարդ մեքենաներից, այլև արագացնում ենք  
նրա մուտքը վորովհետև մեքենայացումը կու-  
լեկտիվի կազմակերպման հիմքն ե կազմում:  
Պարզ ե, ուրեմն, վոր առանց կողբկտիվաց-

ման մենք չենք կարողանա ոգտվել այն բոլոր մեքենաներից ու գործիքներից, վոր տալիս ե մեր արդյունաբերութունը: Այսպիսով բերքատության բարձրացումը սերտ կապվում ե գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման հետ: Գյուղատնտեսությունն ավելի սերտ ե կապվում արդյունաբերության հետ:

«Այն ժամանակ, յերբ կապիտալիստական չերկրներում նոր մեքենաները ֆերմերներին տանում են դեպի կործանում, մեղանում, կուլեկտիվացման և արտադրական կոոպերացիայի միջոցով, այդպիսի մեքենաների տարածումը տանում ե դեպի գյուղացու տնտեսության իսկական վերելքը, դեպի մանր տնտեսության նյութական և կուլտուրական մակարդակի իրական բարձրացումը: Արտադրական կոոպերացման և կոլեկտիվացման ճանապարհը մանր հողատերին քայքայող և վոչնչացնող բարդ մեքենային դարձնում ե մի վճռական միջոց, վորով կարելի չե մանր տնտեսատեր գյուղացուն բարձրացնել մինչև նյութական և հոգևոր կուլտուրայի բարձր աստիճանը: Յերկրագործական աշխատանքի վերափոխման խնդիրը, հեղափոխության և չերկրագործության խնդիրը, վոր բոլոր խնդիրներից հարգելին ե, և վորը կանգնած ե պրոլետարական իշխանության առաջ

կարող ե և պիտի լուծվի միայն և միայն մեղանով, սոցիալիզմ կառուցող պրոլետարական պետության ուժերով»\*):

Ահա թե ինչքան կարևոր նշանակութուն ունի բերքատության բարձրացումը, և ինչու կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը մեզ հրահանգում են՝ բարձրացնել բերեացվությունը:

\*) Կարգա ընկ. Յակովևի ղեկուցումը բերքատության բարձրացման ղեկերի մասին:

## Խ. Ս. Հ. Մ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԲԵՐՔԵՏՎՈՒԹՅԱՆ ԲԵՐՁՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԵՌՔ  
ԸՌՆԵԼԻՔ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԸՍԻՆ

1

Հսելով խՍՀ Միութեան Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան Ժողովրդական Կոմիսսարիատի ղեկուցումը խորհրդային որգանների կողմից գյուղացիական տընտեսութունների բերքատվութեան բարձրացման ասպարիզում կատարած աշխատանքի ստուգման արդունքների մասին և ՌՍՖՍՀ Հողագործութեան Ժողովրդական Կոմիսսարիատի ղեկուցումը,— խՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընդունում է, վոր փորձնական կայանների, կոլեկտիվ ու խորհրդային տնտեսութունների ավյալները, ինչպես և գյուղացիական անհատական առաջավոր տնտեսութունների վերաբերմամբ Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան կողմից կատարած հետազոտութունների ավյալները ցույց են տալիս, վոր գյուղատնտեսութեան բերքատվութեան վճռական բարձրացումն առաջիկա տարիներում միանգամայն հնարավոր է:

Առաջիկա հնգամյակի խնդիրն է հանդիսանում՝ բարձրացնել բերքատվութունն առնվազն 30—35 տոկոսով:

Այս խնդիրը հաջող կերպով կարող է լուծվել

միայն այն դեպքում, յեթե առաջիկա տարիներում չքավոր և միջակ տնտեսութունների հիմնական մասսան ձեռք առնի ու գործադրի հողագործական հասարակ, մանր տնտեսութուններին մատչելի միջոցներ, վորոնք կարող են համեմատաբար կարճ ժամանակամիջոցում բերքատվութեան զգալի բարձրացումն ապահովել:

Այդ միջոցներից են, որինակ, հետևյալները՝ տեսակավոր սերմեր ցանելը, բոլոր սերմերի զտումն ու տեսակավորումը, շարքացանքը, միջնակների վերացումը, մոլախոտերի և վնասատուների դեմ կռիվը, վորոնց տված վնասները տարեկան մի միլիարդ ուսուրլու չեն հասնում, հողի մշակման լավագույն ձևերի տարածումը, աշխատանքի մեջ անասուն չարածեցնելը, անասուններին խնամելու և կերակրելու ձևերի բարելավումը, աղբը վորպես պարարտանյութ ավելի կանոնավոր կերպով ոգտագործելը, գյուղացիական տնտեսավոր կերպով ոգտագործելը, գյուղացիական տնտեսութունների, կոլեկտիվ տնտեսութունների, խորհրդային տնտեսութունների, վարձակալանների, հըրդային տնտեսութունների, վարձակալանների, ունեցած ինվեստարի և նորոգող արհեստանոցների ավելի լրիվ կերպով ոգտագործելը, ֆոսֆորի ավյուրը, կիրը և մոխիրն ըստ կարելույն լայն չափով վորպես պարարտանյութ գործադրելը, կանաչ պարարտացման ընդարձակ չափերով կիրառումը և այլն:

Այս բոլորն իմի առած՝ ցանքի տարածութուններն ընդարձակելու հետ միասին, հատկապես եքստենսիվ շրջաններում պետք է ապահովեն, վոր բերքատվութեան բարձրացման ասպարիզում կառավարութեան կողմից առաջադրված խնդիրներն ամբողջովին իկատար անվեն:

Այդ բոլոր միջոցները լայն կերպով կիրառելու համար պահանջվում է հետևյալը.—

1. Հողաչին որգանները, շրջանաչին, ուայոնական ու վոլոսանների գործադիր կոմիտեները, գյուղական խորհուրդները և գյուղատնտեսական կոոպերացիան պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքը՝ բերքատվութեան բարձրացման բոլոր միջոցները, հատկապես հասարակ ագրիկուլտուր միջոցները կիրառելու ուղղութեամբ:

2. Կառավարական և կոոպերատիվ որգանների կողմից գյուղատնտեսութեանը արված, ինչպես և հենց իր գյուղացու տնտեսութեան, նույնպես և կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսութեանների մեջ յեղած նյութական միջոցները պետք է ավելի լրիվ ու կանոնավոր կերպով ոգտագործվեն:

3. Խորհրդային ու կոլլեկտիվ տնտեսութեանները պետք է ավելի լրիվ չափով ոգտագործվեն վորպես գյուղացիական չքավոր և միջակ խավերի ագրոնոմիական ու արտադրական կազմակերպութեան կենտրոններ:

4. Գյուղացիական մասսաներին պետք է ավելի լայն չափերով մասնակից դարձնել գյուղատնտեսութեան ագրիկուլտուր բարձրացման գործին՝ չքավոր և միջակ գյուղացիների նյութական շահագրգռումն ուժեղացնելու հիմունքով:

Ինկատի առնելով վերոհիշյալը, ԽՍՀ Միութեան կենտրոնական Գործադիր կոմիտեն վորոշում է.—

Առաջարկել դաշնակից հանրապետութեաններին կառավարութեաններին՝

Ապահովել, վոր առաջիկա 5—6 տարում բոլոր

հիմնական կուլտուրաների վոչ ազնիվ սերմերը փոխարինվեն ըստ ուայոնների փորձված ազնիվ և բարելավված սերմերով, վորի համար ձեռնարկել հետևյալ միջոցները.

ա) ԽՍՀ Միութեան Արտաքին և Ներքին Առևտրի ժողովրդական կոմիտսարիատների հետ միատեղ առաջիկա 5 տարում դադարեցնել ազնիվ սերմերի՝ պարենավորման կարիքներին համար գործածութեանը:

բ) Հնգամյակի վերջում ազնիվ սերմերի պետական Ֆոնդը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութեան մեջ հասցնել մինչև 75 միլիոն փթի և ընթացիկ տարուց ձեռնարկել մնացած դաշնակից հանրապետութեաններին մեջ ես ազնիվ սերմերի պետական Ֆոնդ կազմելուն:

գ) Պետական Ֆոնդի ազնիվ սերմերի մեջ մտցրնել նաև վուշի, բազմամյա խոտերի, վիկի, արմատապտուղների և բանջարանոցային բույսերի սերմերը:

դ) Ընթացիկ տարուց սկսած ձեռնարկել տեղական ազնիվ և բարելավված սերմերի ուայոնական, վոլոստային և գյուղական Ֆոնդեր կազմելուն՝ այդ նպատակի համար ամբողջովին ոգտագործելով գյուղատնտեսական կոոպերացիայի սերմերի Ֆոնդերը:

ե) Յուրաքանչյուր ուայոնում (վոլոստում) ապահովել, վոր ազնիվ և բարելավված սերմերի բուծման համար հողամասեր հատկացվին, ու հատուկ պրեմիաներ կարգել այն տնտեսութեաններին համար, վորոնք առաջին հերթին գյուղում կանցնեն ազնիվ սերմերով ցանքս անելուն: Պրեմիաներ կարգել նաև ամբողջ գյուղերին համար, յիթե նրանք ամբողջովին կանցնեն ազնիվ սերմերով ցանքս անելուն:

դ) Ամեն կերպ ոգնությունն ցույց տալ սերմնաբուծական կոոպերացիային:

ե) Միջոցներ ձեռք առնել ազնիվ սերմերն եժանացնելու ուղղությամբ:

ը) Խորհրդալին սերմնաբուծական տնտեսություններին, կոլլեկտիվ տնտեսություններին և սերմնաբուծական կոոպերացիայի փորձնական և կոնտրոլ կայաններին աշխատանքներն ընդլայնելու համար առաջիկա տարիներին ընթացքում դրամական հատկացումներն ավելացնել այն չափերով, վոր վերոհիշյալ ժամանակամիջոցի ընթացքում հնարավոր լինի ամբողջովին անցնելու ազնիվ սերմերի ցանքսին:

2. Վոչ ավելի քան յեռամյա ժամանակամիջոցում ամենուրեք սերմերը զտել ու տեսակավորելը պարտադիր դարձնել: Այդ նպատակով ընդլայնել սերմագտիչ կայանների ցանցը. սերմագտիչ գումակներ կազմակերպել. ապահովել, վոր տարին բոլոր սերմագտիչ մեքենաներն ու արիերները լրիվ ոգտագործվեն. չքավոր տնտեսություններին պատկանող սերմնանվճար զտել և տեսակավորել ի հաշիվ դրամական հատուկ հատկացումների, տրիերների և սերմագտիչ մեքենաների վաճառման արտոնյալ պայմաններ կարգել հողային ամբողջ համայնքների համար. ելեվատորներն ու աղացները լայն չափերով ոգտագործել սերմերն անվճար զտելու և գլուղացիների վոչ ազնիվ սերմերն ազնիվ և բարելավված սերմերով փոխանակելու համար:

3. Վարձակալաններն ու նորոգող արհեստանոցներն ավելի լրիվ ոգտագործել՝ ապահովելով, վոր դրանք տարին բոլոր աշխատեն: Առաջիկա չերկու

տարում ղգալի չափով ավելացնել ինչպես բյուջետային հատկացումները, նույնպես և վարկավորման չափերը՝ վարձակալանների և նորոգող արհեստանոցների ցանցն ընդլայնելու, ինչպես և զրանց անհրաժեշտ մեքենաներ և գործիքներ, պահեստի մասեր, ածուխ և զանազան նյութեր մատակարարելու համար: Նորոգող արհեստանոցների ցանցը պեաք է ընդլայնվի այն չափով, վորպեսզի հնարավոր լինի իր ժամանակին և լավօրակ նորոգել գլուղատնտեսական բոլոր գործիքներն ու բարդ մեքենաները, ինչպես և տրակտորները:

4. Տրակտորներն ավելի լրիվ ոգտագործելու համար դրանց կիրառել վոչ միայն վարի, այլև ուրիշ աշխատանքների համար: Դաշտային աշխատանքների յեռուն շրջանում աշխատանքի չերկու և յերեք պահկություն կարգել: Վառելու և գործիքները յուղելու նյութերի պահեստների ցանցն ընդլայնել: Տրակտորներին կցելու գործիքներ ու պահեստի մասեր մատակարարելն ապահովել: Տրակտորների պատրաստելն ուժեղացնել: Տրակտորները շրջաններին բաժանելիս հատ ու կենտ ցրելու յերևույթը վերացնել, տրակտորային կայաններին ցանց կազմակերպել և ուժեղացնել տրակտորային իմբերի կազմակերպությունը:

5 Ինկատի ունենալով, վոր բերքատուլթյան բարձրացման համար արհեստական պարարտանյութերի գործադրումը վճռական նշանակություն ունի, քիմիական հիմնական արդյունաբերության, մասնավորապէս ազոտային և արհեստական այլ պարարտանյութերի արդյունաբերության տրագ զարգացման ուղղությամբ ձեռք առնված միջոցների հետ միասին

աջակցութիւնն ցոյց տալ գչուդատնտեսական և տնայնագործական կոոպերացիային, նուէնպես և պետական տեղական արդշունարբերութեան, վորպեսզի նրանք Ֆոսֆորիտներ և կիր վերամշակելու գործը մեծ չափերով ընդլայնեն:

Այդ աշխատանքի ժամանակ յերակետ ունենալ այն խնդիրը, վոր հնգամյակի վերջին վոչ սեահողային գոտու վարելահողերի վոչ պակաս քան 25 տոկոսը պետք է կրով պարարտացվի, նուէնպես և լրացուցիչ կերպով պետք է Ֆոսֆորի փոշով պարարտացվի հացահատիկային կուլտուրաներ ցանվող տարածութիւնից վոչ պակաս քան 3 միլիոն հեկտար, բացի այն տարածութիւնը, վորը պետք է պարարտացվի ՍՍՀՄ Ժողովրդական Կոմիսսարների Սորհրդի 1928 թվի հոկտեմբերի 5-ին արհեստական պարարտանյութերի արտադրութիւնն ավելացնելու միջոցների մասին կայացրած վորոշման համաձայն:

Գյուղացիական տնտեսութիւնների վարկավորումն ուժեղացնել արհեստական պարարտանյութեր գնելու դրանց արտադրութեան չափերն ընդլայնվելուն զուգընթաց, և կանաչ պարարտացման սերմեր գնելու համար: Վարկավորումն առաջին հերթին պիտի ուժեղացվի այն գյուղերի վերաբերմամբ, վորոնք կանցնեն հողը համայնքով մշակելուն կամ ել կուլտուրական տնտեսութիւն կվարեն:

6. Աշխատել, վոր հողաշինարարութեան ավարտման՝ առաջներում նշված ժամկետներն արագացվեն: Դրա համար պետք է՝

ա) Առաջիկա տարիներում հողաշինարարութեան համար բաց թողնվող միջոցների հիմնական մասն

նուղել հողագտագործման արմատական թիրուխթունները՝ հողացրվածութիւն, մանր հողաբաժիններն ու հողերի հետու գտնվելը վերայնել հասարակ միջոցներով (մեծ գյուղերը մասերի բաժանելով, հողաշինարարութիւն նվազեցումով և այլն):

բ) Միջոցներ մշակել հողաշինարարութիւնն արագացնելու ուղղութիւնով՝ աշխատանքները մեխանիզացիայի յենթարկելու, հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու, հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու, հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու, հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու և հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու և հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու և հողաշինարարական ապագաբաժնի յենթարկելու:

գ) Արտոնչալ պայմաններով հողաշինարարութիւն կատարել այն գյուղերում, վորոնք անցնում են տնտեսավարութեան համայնական ձևերին, նուէնպես և գործադրում են հողագործութեան բարելավված ձևեր:

Հողաշինարարութեան ժամանակ ապահովել, վոր հնարավոր լինի իրապես անցնել բարելավված սերմնափոխութիւններին:

7. Հողագտագործման կայունութիւնն ամրապնդելու համար հետևել, վոր խիստ կերպով կենսագործվեն այն որենքները, վորոնցով սահմանափակվում են հողի հաճախակի վերաբաժանումները:

8. Այնպիսի միջոցների սխտեմ մշակել, վորոնք նպաստեն հողի մշակման, բերքի հավաքման և անասնաբուծութեան համայնական ձևերի հետագա զարգացմանը:

9. Այնպիսի միջոցների սխտեմ մշակել, վորոնք ապահովեն կոլլեկտիվ տնտեսութիւնների և հասարակ



արտադրական կոոպերատիվների (մեքենատապալործման, սերմաբուծական և նման ընկերություններ) անընդհատ աճումը:

10. Անշեղ կերպով ստուգել կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների աշխատանքը, նրանց առաջադրելով այն խնդիրը, թե նրանք պետք է հընդամյակի վերջին հասնեն բերքատվության 60%<sup>0</sup> բարձրացման՝ նրանց յերկրագործական մեքենաներ մատակարարելու չափերի աճման և ագրիկուլտուր մակարդակի բարձրացման համապատասխան:

11. ԽՍՀՄ իրության Արտաքին և Ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիտեայի և Կոմիտեայի հետ միատեղ հետևել վոր կոնտրակտացիան սերտորեն կապվի գյուղատնտեսության բարձրացման արտադրական խնդիրներին հետ:

Դրա համար՝

ա) Կոնտրակտացիոն պայմանագրերում, վորպես ընդհանուր կանոն, պետք է նախատեսվի այն հասարակ ագրիկուլտուր ձեռնարկումների անհրաժեշտ միջնորդումը, վոր պարտադիր է պայմանագիր կնքող տնտեսության համար:

բ) Կոնտրակտացիան պետք է սերտորեն կապվի տնտեսությունների արտադրական, մատակարարման և վարկավորման հետ:

գ) Հողային և կոոպերատիվ որդանները պետք է ապահովեն պայմանավորվող տնտեսություններին ագրոնոմիական ոգնություն հասցնելը, վորպեսզի տնտեսությունները կարողանան կատարել կոնտրակտացիոն պայմանագրերը:

դ) Կոնտրակտացիոն պայմանագրերը պետք է ձևավորվեն ամիսների ընթացքում գյուղացիություն լայն քննությունների և խորհրդային արտադրական և ներքին Առևտրի Ժողովրդական Կոմիտեայի հետ:

12. Գյուղատնտեսության մեջ ագրոտեխնիկայի բարելավված ձևերի գործադրումն ընդլայնելու համար պետք է՝

ա) Միջոցներ ձեռք առնել վոր գյուղատնտեսությանն սպասարկող գիտական-հետազոտական կազմակերպություններն ամեն կերպ զարգանան և ամրապնդվեն:

բ) Հողային որդանների և գյուղատնտեսական կոոպերացիայի ագրոնոմիական ցանցը, ինչպես և փորձնական հիմնարկների ցանցը զարգացնելու ուղղությամբ կազմված ծրագրերը վերաքննել՝ դրանք ընդլայնելու և սարքավորմամբ ու պերսոնալով ավելի լրիվ ապահովելու ուղղությամբ:

գ) Միջոցների սխտեմ մշակել վոր փորձնական կայանների ձեռք բերած նվաճումներն առավել լրիվ չափով ոգտագործեն խորհրդային, կոլլեկտիվ և անհատական տնտեսությունները՝ այդ նպատակով փորձնական կայաններում կիրառման հատուկ բաժիններ կազմակերպելով:

դ) Ագրոնոմիներին ազատել գրասենեկային և գյուղատնտեսություններից ազատելու նպատակով սպասարկություն ցույց տալու հետ անմիջական կապ չունեցող ամեն տեսակ աշխատանքներից:

ե) Արտադրությունների մեջ աշխատող ագրոնոմիական, հողաշինարարական և անասնաբուժական պերսոնալի նյութական վիճակը բարելավել:

զ) Ագրոնոմիական պերսոնալին պարգևատրել իրենց գործունեությունների և շնորհակալության արգյունավետությունը և անասնաբուժական արգյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ ձեռք բերած նվաճումներին համար:

է) Յերկամյա ժամանակամիջոցում ազրոնոմիական պերսոնալին փոխադրական միջոցներ տրամադրել:

ը) Ազրոնոմի աշխատանքի բնույթը փոխել այնպես, վոր նա սերտորեն կապվի գյուղացիական մասապի հետ՝ արտադրական խորհրդակցություններ, կոնֆերենցիաներ, գյուղացիական հասարակական կազմակերպություններ, գյուղատնտեսական և անտառային աշխատավորների միության միջոցով, և դառնա գյուղատնտեսական արտադրության բարելավված ձևերի իսկական կազմակերպիչը:

13. Գյուղատնտեսական գիտելիքները բնակչության մեջ լայն տարածելու համար

ա) Վոչ ուշ քան չեկոզ ուսումնական տարվա սկզբից գյուղական առաջին և չերկրորդ աստիճանի դպրոցներում գյուղատնտեսական տարրական կրթություն կազմակերպել և դրա ուսուցումը լավ հիմքերի վրա դնել գյուղացիական յերիտասարդական դպրոցներում:

բ) 1929 թվի ամառվա ընթացքում գյուղական ուսուցիչներին մասսայականորեն վերապատրաստել՝ գյուղատնտեսական բոլոր բարձրագույն դպրոցական հաստատություններին և տեխնիկումներին կից գյուղատնտեսական հատուկ կուրսեր կազմակերպելով:

գ) Յեկոզ տարվանից մանկավարժական բարձրագույն դպրոցական հաստատությունների և տեխնիկումների ծրագրի մեջ մտցնել ազրոնոմիայի, գյուղատնտեսական կոոպերացիայի ու կոլեկտիվիզացիայի հատուկ կուրսեր:

դ) 1928—1929 թվի ձմռան ընթացքում ազրո-

կայաններին կից կարճատև կուրսեր կազմակերպել՝ գյուղական ակտիվին, գյուղատնտեսական բանվորներին և առանձնապես գյուղացիական յերիտասարդությանը ազրոնոմիական կրթություն տալու համար:

ե) Ազրոնոմիական կրթությանը լայն չափերով դարկ տալ, այդ նպատակով կինոն և ռադիոն ոգտագործելով:

զ) Վորոշումներ հրատարակել, վորոնցով 1929—1930 ուսումնական տարվա սկզբից գյուղատնտեսական բարձրագույն դպրոցական հաստատություններն ու տեխնիկումները բարձրագույն տեխնիկական դպրոցական հաստատությունների և ինդուստրիալ տեխնիկումների հետ միենույն պայմանների մեջ դրվեն:

յ) Ազրոտեխնիկայի և խոշոր կոլեկտիվ հողագործություն կազմակերպելու հարցերի վերաբերմամբ գիտական-հանրամատչելի եժան բրոշյուրներ հրատարակելն ու գյուղում լայն չափերով տարածելն ապահովել:

14. Գյուղացիության առավել հետամնաց տարրերին բարելավված ձևերով հողագործություն վարելուն դրդելու համար ռաչոնական, վոլոստային, շրջանային և գավառական խորհուրդների առաջիկա համագումարներին վորպես որակարգի հատուկ կետ դնել այնպիսի վորոշումներ հրատարակելու հարցը, վորոնցով բնակչությունը պարտավորվի հասարակ ագլոուսուր ձեռնարկումներ կատարել (սերմերի դոսում, միջնակներ վերացում, սերմերի ախտահանում, աշնանացանքսի վրա անասուն չարածացնել, հողը քարերից ու թիփերից մաքրել և այլն): Աչդպիսի վորոշումներ պետք է հրատարակվեն՝ այդ հարցերը գյուղա-

կան խորհուրդներ, ռայոնական և վոլոստային գործադիր կոմիտեաների գյուղատնտեսական հանձնաժողովներում (սեկցիաներում), այլ և գյուղական ժողովներում և գյուղատնտեսական և գյուղատնտեսութան խորհրդակցությունների մեջ քննարկելուց հետո միայն այն դեպքում, թե քնակչութունը պարտադիր կարգով նման միջոցներ ձեռնարկելու համար նյութական հնարավորություններ ունի:

Հիշյալ պարտադիր վորոշումները հրատարակում են շրջանային, գավառական ու դրանց համապատասխան գործադիր կոմիտեաները:

15. Ինկատի ունենալով, վոր չնայած կառավարական բարձրագույն որգանների մի շարք վորոշումներին, խորհրդային իշխանության տեղական որգանները աշխատանքի ընթացքում գյուղատնտեսութան բերքատվության և արտադրականութան բարձրացման հարցերին մինչև վերջին ժամանակներս միանգամայն չեն ուշադրություն և դարձվում,—

ա) Շրջանային, նահանգային, գավառային, ռայոնական և վոլոստային խորհուրդների առաջիկա համագումարներին և գյուղական ընտրական ժողովներին առաջարկել, վոր համապատասխան գործադիր կոմիտեաների և գյուղական խորհուրդների հաշվետվության քննության ժամանակ հատուկ ուշադրություն դարձվի այն հարցին, թե ինչ չափով այդ գործադիր կոմիտեաները և խորհուրդները ղեկավարություն են ցույց տվել գյուղատնտեսական աշխատանքներին: Գործադիր կոմիտեաների և խորհուրդների գործունեությունը գնահատելիս հաշվի առնել, թե ինչ չափով նրանք ճիշտ են անցկացնում դասակարգային գիծը

չբավորների և միջակների շահերը պաշտպանելու և կուլակի դեմ պայքարելու գործում, նույնպես և այն, թե ինչչափով նրանք գյուղատնտեսութան բարձրացման ղեկավար են հանդեսացել:

բ) Խորհրդային իշխանութան կողմից գյուղատնտեսութանը հատկացված նյութական միջոցների ողտագործումը հասարակական նույնպիսի կոնտրոլի չենթարկել, ինչպես բանվորներն արդեն քաղաքում կոնտրոլի չեն չենթարկում կապիտալ շինարարությունը:

գ) Աշխուժացնել և ուժեղացնել գյուղական խորհուրդներին, ռայոնական և վոլոստային գործադիր կոմիտեաներին կից գյուղատնտեսական հանձնաժողովների (սեկցիաների) աշխատանքը, դրանց կազմի մեջ մտցրնել կոլլեկտիվ տնտեսությունների անդամներ և կուլտուրական տնտեսավարություն ունեցող անհատական տնտեսություն վարող չբավորներ ու միջակներ: Գյուղատնտեսական սեկցիաների աշխատանքները վարել այնպես, ինչպես վարում են արդյունաբերական ձեռնարկների արտադրական խորհրդակցությունները:

դ) Գյուղատնտեսական սեկցիաների անդամների վրա գնել գյուղական ագրոնոմիական կատարածուների պարտականությունը՝ գյուղացիական տնտեսությունների մեջ ագրոնոմիական հասարակ ձեռնարկումների կատարման ընթացքին հետևելու համար:

ե) Մի շարք ռայոններում (Հյուսիսային կովկաս, կենտրոնական Սևահող շրջան, Մերձվոլգյան Ստորին շրջան և այլն) բերքատվության հարցերի վերաբերմամբ գյուղացիական լայն համագումարներ և կոնֆերենցիաներ (ռայոնական, շրջանային, յերկրա-

յին) գումարելու պրակտիկան մյուս շրջաններումն ել կիրառել: Առանձին ուշադրություն դարձնել ուսուցանական և վոլոստային կոնֆերենցիաներ պարբերաբար գումարելու վրա՝ ալդ կոնֆերենցիաները նշանակելով գյուղատնտեսական ցուցահանդեսները, մրցումները և այլն ժամանակ:

16. Վճռականապես վերջ տալ գյուղատնտեսական միասնական հարկի, ինքնատուրքադրման և այլն ժամանակ միջակ տնտեսությունների վերաբերմամբ տեղի ունեցող սխալներին ու հեղափոխական որինակա-նությունը խստութեամբ պահպանել:

17. Վորովհետև վերոհիշյալ բոլոր ձեռնարկումները թեպետ և ապահովում են կարճ ժամանակամիջոցում բերքատուլության զգալի բարձրացումը, բայց չեն վերացնում մանր տնտեսության սակավարտադրողականութունը. վորովհետև գյուղատնտեսության վճռական առաջընթացումը հնարավոր է միայն նրա լրակատար վերակառուցմամբ և խոշոր գյուղատնտեսական արտադրություն ստեղծելով՝ մեքենաների և խիմիզացիայի լայն չափերով կիրառմամբ, — ինկատի ունենալով այս հանգամանքները, պարտավորեցնել հողագործության ժողովրդական կոմիսսարիատներին, — գյուղատնտեսական կոոպերացիային ևս գործի մեջ քաշելով, — վեց ամսվա ժամանակամիջոցում լրակատար հաշվառում կատարել թե առաջիկա հնգամյակում գյուղատնտեսության համար ինչ քանակով մեքենաներ, արհեստական պարարտանյութեր, գյուղատնտեսական արտադրանքը վերամշակելու ձեռնարկությունների հոմար սարքավորում ու ֆնաստունները դեմ կռվելու միջոցներ են հարկավոր՝ յեղակեա ընդունելով, վոր առաջիկա հնգամյակում բերքատուլությունն առնվազն 30—35 տոկոս պետք է բարձրանա:

18. Հանձնարարել ԽՍՀՄ-իության Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին՝

ա) Հողով. 17-ում հիշված գյուղատնտեսության պահանջի հիման վրա հնգամյա ծրագրում նախատեսել արդյունաբերության այն ճյուղերի համապատասխան ընդլայնումը, վորոնք պետք է ապահովեն գյուղատնտեսության արտադրական պահանջները: Ըստ վորում պետք է հաշվի առնել վերակառուցվող գյուղատնտեսության ինչպես քանակական, նույնպես և վորակական պահանջներն ու գյուղատնտեսության մեքենաշինության և արհեստական պարարտանյութերի շրջանում յերվոպական ու ամերիկյան տեխնիկայի բոլոր նոր նվաճումները:

բ) Կազմակերպել արդեն ուրիշ յերկրներում փորձով ստուգված նոր մեքենաների մասսայական արտադրությունը, ինչպես, որինակ, հնձող ու ձեծող մեքենաներ, ցանոդ մեքենաներ, վուշ հավաքող մեքենաներ, բամբակ ցանելու մեքենաներ և այլն:

գ) Առաջիկա հնգամյակի ընթացքում ընդլայնել շարքացան մեքենաների արտադրությունն այնպիսի չափերով, վոր հնգամյակի վերջին բոլոր ցանքսերի առնվազն 50 տոկ. շարքացան արվի:

դ) Այս տարվանից սկսած ֆնաստունների դեմ պայքարելու միջոցները արտադրության չափերն ընդարձակել այն չափով, վոր հնարավոր լինի առաջիկա յերեք տարվա ընթացքում բավարարել գյուղատնտեսության ամբողջ կարիքն այդ նյութերի վերաբերմամբ: Այս տարի հենց լրիվ ոգտագործել գոյություն ունեցող սարքավորումը պղնձե արձասպ, յերթյուն ունեցող սարքավորումը պղնձե արձասպ, կաթե արձասպ, Փորմալին, ծծմբափոշի և ֆնաստունների դեմ կռվելու այլ նյութեր արտադրելու համար:

III

19. Վորովհետև սույն վորոշման մեջ նշված բոլոր միջոցները կարող են կենսագործվել գյուղատնտեսական կոոպերացիայի վճռական ուժեղացման աշխատանքները բարելավման դեպքում, առաջարկել գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնական և տեղական կազմակերպություններին միջոցներ ձեռք առնել կոոպերատիվ կազմակերպությունների մեջ գյուղացիության միջակ ու չքավոր խավերին ավելի լայն չափով ընդգրկելու ուղղությամբ, գյուղատնտեսական կոոպերացիայի ամբողջ աշխատանքը բարելավելու ուղղությամբ, առևտրական գործունեությունից գյուղական տնտեսության իսկական արտադրական կոոպերացման վճռականորեն անցնելու ուղղությամբ, մասնավոր շահն ընդհանուր շահի հետ կապելու միջոցով չքավոր և միջակ գյուղացիության տնտեսական շահագրգռությունը կոոպերացիայի վերաբերմամբ անհեղինակ ուղղությամբ, կոոպերացիայի մեջ ինքնագործունեությունը, նախաձեռնությունն և ինքնաքննադատությունը լայն չափերով զարգացնելու ուղղությամբ:

Գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր անդամները պետք է ստուգեն նրա ընտրական որգանների գործունեությունը, վորի ժամանակ պետք է ինկատի առնվեն նրանց ազրոարտադրական աշխատանքը, կոոպերացիայի տնտեսությունների ազրիկուտուր առաջադիմությունը՝ կուլտուր և բերքատուության ասպարեզներում ձեռք բերված նվաճումները:

IV

20. ԽՍՀ Միության Պետական Պլանային Հանձնաժողովին հանձնարարել, վոր նա՝ առավել վորակյալ մասնագետները, վոր ձագետները, պրակտիկները

մասնակցությունը, Արևմտյան Ֆելրոպայի և Ամերիկայի վոր ձն ամբողջովին հաշվառելով, բերքատուության վերաբերմամբ տեղական կուլտուրներին ու բարձր բերքատուության հասած անհատական և կոլլեկտիվ տնտեսությունների վոր ձը հաշվի առնելով՝ ըստ ռայոնների մշակի այն տնտեսական և տեխնիկական ձեռնարկումների սխտեմը, վորոնց միջոցով կապահովվի հիմնական կուլտուրաների բերքատուության բարձրացումը հնգամյակի վերջին ԽՍՀ Միության մեջ միջին հաշվով առնվազն 30—35 տոկոսով:

Ընթացիկ հնգամյակի ձեռնարկումները խնդրները կապել ԽՍՀ Միության գյուղատնտեսության արմատական վերակառուցման խնդրներին հետ: Այդ վերակառուցումը պիտի տեղի ունենա կոլլեկտիվ խոր հողագործության և խորհրդային տնտեսությունների զարգացման, արդյունաբերության և հողագործության զարգացման սերտ կապի, գյուղատնտեսության բազմազան ճյուղերն ըստ ռայոնների կանոնավոր բաշխելու, համաշխարհային վոր ձով ստուգված, գիտականորեն հիմնավորված ըստ ռայոնների ազրո և զոտտեխնիկական միջոցներ զորձադրելու, տեղական պայմաններին համապատասխան հողագործության ռացիոնալ սխտեմներ, գյուղատնտեսության լայն խիմիզացիա, մեխանիզացիա և ինդուստրիալիզացիա կիրառելու հիման վրա:

V

21. Առաջարկել դաշնակից հանրապետությունները ժողովրդական կոմիսարներին խորհուրդներին և ԽՍՀ Միության ժողովրդական Տնտեսության Գերաուլն Խորհրդին 1929 թվի հուլիսի 1-ին զեկուցում

ներկայացնել ԽՍՀՄ իրութեան Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան Ժողովրդական Կոմիսսարիատի լեզրակա-ցութեան հետ միասին՝ ԽՍՀՄ իրութեան Ժողովրդական Կոմիսսարներին Խորհրդին՝ սույն վորոշումն ի կատար ածելու վերաբերմամբ:

## VI

22. Նշելով հողային որգաններին այժմ առաջադրված ծայր աստիճան բարձր և պատասխանատու խնդիրները, հողային գործերի վերաբերմամբ համամիութենական ղեկավարութեան անբավարարութիւնը, համամիութենական նշանակութիւն ունեցող գյուղատնտեսական ձեռնարկների և գյուղատնտեսական միջարք ձյուղերին վերաբերող ինքնուրույն համամիութենական որգանների առկայութիւնը, գյուղատնտեսութեան և արդյունաբերութեան ծավալման մեջ յեղած կապի անբավարարութիւնը, — առաջարկել դաշնակից հանրապետութիւնների կենտրոնական գործադիր կոմիտեներին, վոր նրանք քննարկեն գյուղատնտեսութեան պլանավորման և կարգավորման ասպարիզներում համամիութենական ղեկավարութեան ձևերի հարցը և այդ հարցի առթիվ իրենց առաջարկները մի ամսվա ընթացքում ներկայացնեն ԽՍՀՄ իրութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահութեանը:

ԽՍՀՄ իրութեան ԿԳԿ նախագահ՝

Ս. Չերվյակով

ԽՍՀՄ իրութեան ԿԳԿ քարտուղար՝

Մոսկվա՝ Կրեմլ  
15 դեկտ. 1928 թ.

«Ազգային գրադարան»



NL0208759

Зд. 113

Ал. Степанян

**За поднятие  
урожая**



ԳԻՆԸ 17 Կ.